

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԿՅՈՒՂ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

«ՖԻՆԱՆՍՆԵՐ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Ֆինանսներ 041201.00.6
2. Բուհը	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	տնտեսագիտության բակալավր
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2023/24
6. Ուսումնառության լեզուն	Գրական հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա

<b>8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները</b> Ծրագրի դիմորդը պետք է ունենա ՀՀ եռաստիճան միջնակարգ ընդհանուր կամ դրան համարժեք այլ կրթություն /նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական/: Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի: Այլ մասնագիտությամբ բակալավրի կամ համարժեք որակավորում ունեցող դիմորդների ընդունելությունը կատարվում է առանց ընդունելության քննությունների: Այս դեպքում դիմորդը միանգամից ընդունվում է կրթական ծրագրի երկրորդ կուրս:
--

<b>9. Ծրագրի նպատակները և խնդիրները</b> • Ծրագրի նպատակն է պատրաստել տնտեսագիտության, ֆինանսաբանկային հիմնարար գիտելիքներ և հմտություններ ունեցող, ֆինանսական վերլուծություններ իրականացնող տնտեսագետ-մասնագետներ տնտեսության տարբեր ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների, առավելապես ֆինանսաբանկային ոլորտի, ինչպես նաև արտադրական, պետական կառավարման համակարգերի տարբեր օղակների համար: Նպատակ է տնտեսագիտական մտածողության ձևավորմանը:
---

<b>10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները</b> <b>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն</b> Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի. 1. ներկայացնելու վերլուծությունների մաթեմատիկական կանոնները և հնարքները, 2. ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները, 3. բացատրելու վիճակագրական տվյալների կազմման և վերլուծության ձևերը, 4. մեկնաբանելու բանկային գործունեության հիմնարար սկզբունքները, 5. ներկայացնելու ֆինանսական հաշվառման էությունը և բացատրելու հաշվետվությունների պատրաստման և ստուգման ձևերը, 6. համեմատելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները, և ներկայացնելու մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը, 7. բացահայտելու տնտեսագիտական տարբեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումներ, 8. մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, քննարկելու գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները, 9. կապակցելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները:
---

<b>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</b> Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. 1. կիրառելու տնտեսամաթեմատիկական անալիզի մեթոդները և գործիքակազմը արդի տնտեսական
--

- հիմնախնդիրների մոդելավորման համար,
2. կատարելու գիտահետազոտական աշխատանքներ և գործնական վերլուծություններ օգտագործելով վիճակագրական և էկոնոմետրիկ մեթոդներ,
  3. կիրառելու մաթեմատիկական հասկացությունները, սիմվոլները քանակական և որակական հարաբերությունների մեկնաբանման համար,
  4. չափելու և գնահատելու ֆինանսական ռիսկերը, մշակելու ռիսկերի նվազեցման ստրատեգիա,
  5. քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները,
  6. տարբեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար ղեկավարի օգնությամբ իրականացնելու հետազոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր,
  7. մասնագիտական վերլուծություններով և հաշվարկներով գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, ներկայացնելու վերլուծությունից բխող եզրակացություններ,
  8. կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները,
  9. գնահատելու բանկերի ֆինանսական կայունությունը, բացահայտելու բանկային համակարգի ֆինանսական կայունության վրա ազդող գործոնները,
  10. կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարբեր համակարգչային ծրագրեր:

**Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**  
 Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:
2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:
3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
6. Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:
7. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:
8. Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:
9. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

**11. Ծրագրի ուսումնական պլանը**  
 Կցված է

**12. Ուսումնական պլանի քարտեզը**  
 Կցված է

- 13. Գնահատման ձևերը**
- ստուգարքներ,
  - ընթացիկ քննություններ,
  - հետազոտական աշխատանք,
  - ընթացիկ ստուգումներ,
  - ինքնուրույն աշխատանք, b
  - եզրափակիչ քննություններ,
  - ավարտական աշխատանքի պաշտպանություն

#### 14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

«Ֆինանսներ» ծրագիրն ապահովում է համապատասխան ակադեմիական բազա այն ուսանողների համար, ովքեր մտադիր են իրենց ապագա կարիերան կառուցել բիզնեսի, բանկային հատվածի, կազմակերպությունների ֆինանսական կառավարման և հանրային կառավարման ոլորտներում:

Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել տնտեսության տարբեր ոլորտների ձեռնարկություններում, առևտրային բանկերում, խորհրդատվական ընկերություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

- ֆինանսական խորհրդատու,
- վիճակագրական տվյալների վերլուծաբան.
- մենեջմենթի, մարքեթինգի խորհրդատու
- կրտսեր տնտեսագետ-ֆինանսիստ,
- կրտսեր հաշվապահ,
- վիճակագրության բաժնի մասնագետ
- ՓՄՁ կառավարիչ
- վարկային մասնագետ,
- սպասարկման բաժնի մասնագետ
- ռիսկերի կառավարման կրտսեր մասնագետ
- տնտեսական քաղաքականության ծրագրերի մշակման խմբի անդամ,
- տնտեսական նախագծերի մշակման, դրանց արդյունավետության գնահատման և իրականացման վերահսկողության գծով մասնագետ:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը մագիստրատուրայում

#### 15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են հետևյալ օժանդակ ռեսուրսները.

- Ժամանակակից սարքավորումներով և ծրագրային միջոցներով ապահովված լսարաններ,
- առցանց դասախոսություններ,
- էլեկտրոնային ռեսուրսներ:

#### 16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

- ՀՀ կրթական որակավորումների ազգային շրջանակ
- ԵՊՀ Ֆինանսներ (ըստ ոլորտի) կրթական ծրագիր,
- ՀՊՏՀ Ֆինանսներ կրթական ծրագիր,
- Обязательные компетенции ФГОС ВПО бакалавров по направлению “Экономика” Российской Федерации.
- Каталог учебных программ экономического факультета МГУ программы бакалавров по направлению “Экономика”.
- Middlex University. Programme Specification and Curriculum Map for BSc Honours Business Economics 2019-2020;
- The framework of qualifications for the European Higher Education Area, 2020:

#### 17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Ֆինանսներ ԿԾ-ի նպատակների հաջող իրականացման համար ֆակուլտետում առկա են անհրաժեշտ համակարգչային ծրագրերը /ՀՕ-հաշվապահ, STATA, Eviews, Moodle /:

#### 18. Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող պահանջներ

##### 1. Ընդհանրական կարողություններ

##### Դասավանդման/մանկավարժական

*Դասավանդողը պետք է ունակ լինի.*

- ներկայացնելու դասընթացի նպատակները և խնդիրները, մեկնաբանելու և պարզաբանելու դասընթացի կրթական վերջնարդյունքները և դրանց կապն ու համադրումը համապատասխան կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ,
- կիրառելու դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ,
- կիրառելու ուսանողներին մոտիվացնող և նրանց ակտիվությունը խրախուսող մեխանիզմներ և մեթոդներ,
- սահմանելու կրթական ընդհանուր նպատակ և ջանքեր ներդնելու դրա իրականացման ուղղությամբ,
- զարգացնելու ուսանողների վերլուծական, փաստերն ու իրողությունները ընդհանրացնելու, երևույթները համակողմանիորեն գնահատելու, եզրակացություններ կատարելու և տեսական

- գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունները,
- կազմելու դասընթացի փաթեթ:

### **Հետազոտական**

*Դասավանդողը պետք է ունակ լինի.*

- իրականացնելու գիտահետազոտական աշխատանքներ,
- վերլուծելու մանկավարժական սեփական գործունեության արդյունավետությունը,
- կիրառելու միջառարկայական և համալիր հետազոտությունների մեթոդաբանություններ,
- ճիշտ ընտրելու և համադրելու հետազոտությունների իրականացման և կիրառվող ուսուցման մեթոդները:

### **Հաղորդակցման**

*Դասավանդողը պետք է ունակ լինի.*

- ուսանողի հետ հաստատելու միջանձնային և կառուցողական հարաբերություններ,
- արդյունավետ պլանավորելու դասընթացը և դասապրոցերը, կառավարելու լսարանը, բոլոր ուսանողներին դարձնելու ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցներ,
- հաղորդակցվելու որևէ օտար լեզվով,
- պահպանելու մանկավարժական և մասնագիտական էթիկայի կանոնները,
- պահպանելու բարձրագույն կրթության ոլորտի իրավական նորմերը:

### **SZS կիրառության**

*Դասավանդողը պետք է ունակ լինի.*

- ուսումնական գործընթացում ազատ կիրառելու համակարգչային հիմնական ծրագրերը (MS Office փաթեթ՝ Word, Excel, Power-Point, Internet, e-mail ),
- պատրաստելու և ներկայացնելու լուսացուցադրություններ,
- օգտագործելու առցանց ուսուցման տեխնոլոգիաներ,
- կիրառելու Moodle հարթակը դասապրոցերը իրականացնելու համար:

## **1. Մասնագիտական կարողություններ**

*Դասավանդողը պետք է ունակ լինի.*

- ներկայացնելու և մեկնաբանելու դասավանդման ոլորտի հիմնախնդիրները և ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանական հիմքերը,
- սահմանելու դասավանդվող դասընթաց(ներ)ի հիմնական հասկացությունները, ուսումնասիրության հայեցակարգային մոտեցումները,
- ուսուցման գործընթացում ստեղծելու միջառարկայական կապեր,
- ձևակերպելու դասավանդվող առարկայի ոլորտում խնդիրներ, ընտրելու անհրաժեշտ ուսումնական նյութեր և ուսուցման միջոցներ,
- կիրառելու ոլորտի խնդիրների ուսումնասիրման մեթոդական առաջավոր փորձը և դրսևորելու ստեղծագործական մոտեցումներ:

## **3. Ընդհանուր պահանջներ**

### **Գիտական գործունեություն**

- Որակավորման կամ գիտական աստիճանի առկայություն դասավանդվող դասընթացի/մոդուլի ոլորտում:
- Գիտական աստիճանի և կոչման առկայություն /ցանկալի է բակալավրատում, պարտադիր՝ մագիստրատուրայի համար /:
- Հետազոտական աշխատանքների առկայություն մանկավարժության կամ դասավանդվող դասընթացի /մոդուլի ոլորտում:
- Մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովների:

### **Գիտամանկավարժական կամ պրակտիկ աշխատանքի փորձ**

- Գիտական կամ մանկավարժական աշխատանքի փորձառություն՝ բացի «դասախոս» տարակարգի համար (նվազագույնը 3 տարի):
- Մասնակցություն որակավորման բարձրացման դասընթացներին վերջին 5 տարիների ընթացքում:
- Մասնագիտական պրակտիկ գործունեության փորձառություն /ցանկալի է/:

**«ՖԻՆԱՆՍՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ**  
**ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԸ**

**Ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.**

<b>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		<b>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</b>	
Ա1	Ներկայացնելու վերլուծությունների մաթեմատիկական կանոնները և հնարքները:	Բ1	Կիրառելու տնտեսամաթեմատիկական անալիզի մեթոդները և գործիքակազմը արդի տնտեսական հիմնախնդիրների մոդելավորման համար
Ա2	Ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները:	Բ2	Կատարելու գիտահետազոտական աշխատանքներ և գործնական վերլուծություններ օգտագործելով վիճակագրական և էկոնոմետրիկ մեթոդներ:
Ա3	Բացատրելու վիճակագրական տվյալների կազմման և վերլուծության ձևերը:	Բ3	Կիրառելու մաթեմատիկական հասկացությունները, սիմվոլները քանակական և որակական հարաբերությունների մեկնաբանման համար:
Ա4	Մեկնաբանելու բանկային գործունեության հիմնարար սկզբունքները:	Բ4	Չափելու և գնահատելու ֆինանսական ռիսկերը, մշակելու ռիսկերի նվազեցման ստրատեգիա:
Ա5	Ներկայացնելու ֆինանսական հաշվառման էությունը և բացատրելու հաշվետվությունների պատրաստման և ստուգման ձևերը:	Բ5	Քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները
Ա6	Համեմատելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները, և ներկայացնելու մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը:	Բ6	Տարբեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար ղեկավարի օգնությամբ իրականացնելու հետազոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր:
Ա7	Բացահայտելու տնտեսագիտական տարբեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումներ	Բ7	Մասնագիտական վերլուծություններով և հաշվարկներով գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, ներկայացնելու վերլուծությունից բխող եզրակացություններ:
Ա8	Մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, քննարկելու գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները:	Բ8	Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները:
Ա9	Կապակցելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները:	Բ9	Գնահատելու բանկերի ֆինանսական կայունությունը, բացահայտելու բանկային համակարգի ֆինանսական կայունության վրա ազդող գործոնները:
		Բ10	Կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարբեր համակարգչային ծրագրեր
<b>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</b>			
Գ1	Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:	Գ5	Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
Գ2	Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրայնում:	Գ6	Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա

			ուսումնառության ուղիները որոշելու համար:
Գ3	Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:	Գ7	Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:
Գ4	Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքերի իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:	Գ8	Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:
		Գ9	Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվա-նիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																												
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Ա8	Ա9	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Բ7	Բ8	Բ9	Բ10	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ8	Գ9	
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	0302/B01																						+			+				
Հայոց պատմություն -1	0304/B02																								+	+				
Ֆիզդաստիարակություն	0001/B03																							+	+	+				
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	0105/B04																													
Ռուսաց լեզու-1	0305/B05																							+	+	+				
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	0001/B06																											+		
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	0302/B07																							+		+	+			
Հայոց պատմություն -2	0304/B08																								+	+				
Ֆիզդաստիարակություն	0001/B9																													
Ռուսաց լեզու-2	0305/B10																							+	+	+				+
Ֆիզդաստիարակություն	0001/B11																													
Փիլիսոփայություն	0304/B12																						+	+	+	+	+			
Անգլերեն-1	0305/B14																						+	+	+	+	+			
Անգլերեն-2	0305/B15																						+	+	+	+	+			
Իրավունքի հիմունքներ	0304/B16														+								+	+	+	+	+			
Բարոյագիտության հիմունքներ	0303/B16																						+	+	+	+	+			
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	0105/B16																						+	+	+	+	+			
Կրոնագիտության հիմունքներ	0304/B16																						+		+	+	+			
Հոգեբանության հիմունքներ	0303/B16																						+		+	+	+			
Մշակութաբանության հիմունքներ	0202/B16																						+		+	+	+			
Տրամաբանության հիմունքներ	0304/B16																						+	+	+	+	+			+
Քաղաքագիտության հիմունքներ	0304/B16																						+	+	+	+	+			+
Սոցիոլոգիայի հիմունքներ	0303/B16																+						+	+	+	+	+	+	+	+
Հաղորդակցման հմտություններ	0303/B16																						+	+	+	+	+	+	+	+
Քննական և ստեղծագործական մտածողություն	0303/B16																						+	+	+	+	+	+		+
Մեդիագրագիտություն	0303/B16																								+	+	+	+	+	





Միջազգային առևտուր	0201/B43		+					+					+	+		+					+	+	+	+					+		
Տնտեսական մրցակցություն և մենաշնորհների պետական կարգավորում	0201/B42							+	+					+	+							+	+	+	+					+	
Բիզնեսի կազմակերպում և կառավարում	0201/B43							+					+		+	+					+		+	+	+					+	
ՀՀ Հարկային համակարգ	0201/B42							+				+					+						+	+	+					+	
Մարքեթինգի հիմունքներ	0201/B42							+	+					+	+								+	+	+	+				+	
Ներդրումային նախագծերի կառավարման հիմունքներ	0201/B42		+						+				+	+	+	+	+						+	+	+	+				+	
Առևտրային բանկերի գործառույթներ	0201/B43		+		+	+							+	+	+	+	+						+	+	+	+				+	
Python	0201/B42			+	+								+	+	+	+	+					+	+	+	+					+	+
Մաքսային գործ	0104/B43			+	+								+	+	+	+	+					+	+	+	+					+	+
Միջազգային բիզնեսի հիմունքներ	0201/B43			+	+								+	+	+	+	+					+	+	+	+					+	+
Միջազգային առևտուր	0201/B43	+		+	+								+	+	+	+	+					+	+	+	+					+	+
Կառավարչական հաշվառում	0201/B43			+	+								+	+	+	+	+					+	+	+	+					+	+
Առդիտի հիմունքներ	0201/B43			+	+								+	+	+	+	+					+	+	+	+					+	+
Տնտեսական գործունեության վերլուծություն	0201/B43			+	+								+	+	+	+	+					+	+	+	+					+	+
Հաշվապահական ծրագրեր	0201/B43	+		+	+								+	+	+	+	+					+	+	+	+					+	+
Ուսումնական պրակտիկա	0201/B44	+		+	+								+	+	+	+	+					+	+	+	+					+	+
Մասնագիտական պրակտիկա	0201/B45			+	+								+	+	+	+	+					+	+	+	+					+	+
Ավարտական աշխատանք	0201/B46	+		+	+								+	+	+	+	+					+	+	+	+					+	+

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**  
**ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**  
**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**  
**«ՖԻԼԱՆՍԵՐ»**  
**ՕՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ**  
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ**  
**(ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)**

1.0302/B01	2.Հայոց լեզու և խոսքի մշակույթ -1	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/ շաբ.	5.0/30/0	
6.1-ին կիսամյակ	7.Ստուգաք	
<p><b>8.Դասընթացի նպատակն է ուսումնասիրել խոսքը, նրա դրսևորման ձևերը, ուղղախոսական ու արտասանական նորմերը, խոսքի բաղադրիչների կապակցման միջոցները, խոսքի մասերի գործածության յուրահատկությունները, գրագրության ձևերը և խոսքային էթիկան, կառուցել արտահայտիչ ու ներգործուն գրավոր ու բանավոր խոսք:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսուցանել խոսքի մշակույթի ընդհանուր օրինաչափությունները, լեզվական և գրական նորմերը, հնչյունական, բառային և քերականական մակարդակներն ու նրանց կիրառության յուրահատկությունները,</li> <li>• ձևավորել ու մշակել գրական խոսքի բարձր ճաշակ ու մշակույթ:</li> </ul>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու խոսքի ընդհանուր հատկանիշները, դրսևորման ձևերը, սահմանելու և ճիշտ կիրառելու լեզվական և հնչյունական-արտասանական, ուղղախոսական նորմերը,</li> <li>2. ձևավորելու բանավոր խոսքի և գրավոր խոսքի բարձր մակարդակ՝ ճիշտ և տեղին կիրառելով լեզվական տարբեր իրողությունները (բառապաշարի շերտեր, ձևաիմաստային խմբեր, դարձվածքներ և այլն),</li> <li>3. սահմանելու, բացատրելու գրական, լեզվական, ոճական նորմաները, որոնք կիրառելի են ժամանակակից հայերենում:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք:</li> <li>2. գործառնելու գրագրության ձևերը, ուղղախոսության և արտասանվածքի նորմերը բանավոր խոսքում:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,</li> <li>2. աշխատելու թիմում:</li> </ol>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</b></p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությունում:</p> <p><b>Գ5.</b>Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p>		
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• քննարկում /բանավեճ</li> <li>• համագործակցային աշխատանք</li> <li>• մտազրոհ</li> <li>• վերլուծական մեթոդ</li> <li>• խոսքային կամ բանավոր մեթոդ</li> <li>• գրավոր մեթոդ</li> <li>• բացատրական մեթոդ:</li> </ul>		
<p><b>12.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Խոսքի մշակույթ առարկան, նպատակը և խնդիրները: Խոսքի դրսևորման ձևերը: Լեզվական նորմ:</p> <p><b>Թեմա 2.</b> Հնչյունական /արտասանական/ մակարդակ: Գրագրության ձևեր: <b>Թեմա 3.</b> Բառային մակարդակ:</p> <p><b>Թեմա 4.</b> Քերականական մակարդակ: Ձևաբանություն: <b>Թեմա 5.</b> Շարահյուսություն:</p>		
<p><b>13.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Ստուգաքքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:</p>		
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, Եր., 2014:</li> <li>2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, Եր., 2015:</li> </ol>		

3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/, Եր., 2002:  
 4. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2003:  
 5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2003:  
 6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Եր., 1997:  
 7. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2003:  
 8. Մկրտչյան Ռ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճագիտություն, Եր., 1992:  
 9. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003:  
 10. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Ա, Բ, Եր., 1990, 1991:  
 11. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Հնչյունաբանություն, բառագիտություն/ Եր., 1982:

1.0302/B07	2.Հայոց լեզու և խոսքի մշակույթ -2	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/30/0	
6.2-րդ կիսամյակ	7.Մտուգարք	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցների յուրացմամբ, գործառական բոլոր ոճերի առանձնահատկությունների իմացությամբ ու անսխալ, զրագետ գործառմամբ, ձևավորել կարողություններ՝ գեղարվեստական խոսքի հնչյունական, բառային ու քերականական առանձնահատկությունները ինքնուրույն մեկնաբանելու և արժևորելու համար, ծանոթացնել հրապարակային խոսքի ընդհանուր կառուցվածքին և հիմնական հատկանիշներին և կիրառելի դարձնել ուսումնական գործընթացներում:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• բացահայտել արտահայտչական և պատկերավորման միջոցների դերը խոսքում, խոսքի գործառական տարբերակների համակարգը /գիտական, պաշտոնական, խոսակցական/, գեղարվեստական և հրապարակային խոսքի խնդիրները, կառուցվածքը, լեզվական առանձնահատկությունները:</li> </ul>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու խոսքի արժանիքները,</li> <li>2. կիրառելու արտահայտչական և պատկերավորման միջոցները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. լուսաբանելու գործառական ոճերի դասակարգման հիմունքները և ոճերի առանձնահատկությունները:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կառուցելու պատկերավոր և գրագետ խոսքարվեստ, վերացնելու խոսքային անճշտությունները, կունենա խոսքային բարձր էթիկետ:</li> </ol>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</b></p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> <p><b>Գ5.</b>Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p>		
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• քննարկում /բանավեճ</li> <li>• համագործակցային աշխատանք</li> <li>• մտազրոհ</li> <li>• վերլուծական մեթոդ</li> <li>• խոսքային կամ բանավոր մեթոդ</li> <li>• գրավոր մեթոդ</li> <li>• բացատրական մեթոդ:</li> </ul>		
<p><b>12.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Խոսքի արժանիքները: <b>Թեմա 2.</b> Խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցներ: <b>Թեմա 3.</b> Խոսքի գործառական տարբերակներ /գիտական,պաշտոնական, խոսակցական: <b>Թեմա 4.</b> Գեղարվեստական ոճ: Հրապարակային խոսք:</p>		
<p><b>13.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Մտուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:</p>		
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, Եր., 2014:</li> </ol>		

2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, Եր., 2015:
3. Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզու/Չնաբանություն/, Եր., 2002:
4. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2003:
5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2003:
6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Եր., 1997:
7. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2003:
8. Մկրտչյան Ռ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճագիտություն, Եր., 1992:
9. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003:
10. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Ա, Բ, Եր., 1990, 1991:
11. Սուրբասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու /Հնչյունաբանություն, բառագիտություն/, Եր., 1982:

1.0304/B 02	2.Հայոց պատմություն -1	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.15/0/15	
6.3-ին կիսամյակ	7. Ստուգաք	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը՝ ծագումից մինչև 17-րդ դարն ընկած ժամանակահատվածը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք Հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրության, համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտական բարձր մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն ՀՀ քաղաքական լավագույն ապագայի կերտման նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ձևավորել հստակ պատկերացում հայոց հին և միջնադարյան, պետականությունների առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին:</li> <li>• ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կորոշություն,</li> <li>• ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների հետ տրամաբանական կամ պատճառահետևանքային կապ ապահովելու համար:</li> </ul>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. վերաբրտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը,</li> <li>2. նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները,</li> <li>3. ներկայացնելու համապատասխան ժամանակաշրջա նում ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի արժեքները, լուսաբանել Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսության, ռազմական և այլ բնագավառներ ու նվաճումները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը,</li> <li>2. արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում,</li> <li>3. արժևորելու ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական դարաշրջաններում ստեղծված մեր մշակութային արժեքները:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</li> <li>2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</li> </ol>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնաբաղադրիչները.</b></p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> <p><b>Գ5.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p>		

<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն,</li> <li>• սեմինար,</li> <li>• ռեֆերատ,</li> <li>• անհատական և խմբային առաջադրանքներ:</li> </ul>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b> Ստուգաբար անցկացվում նախապես տրված հարցաշարի շրջականում /բանավոր հարցում/:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b> <b>Թեմա 1.</b> Հայաստանը հնագույն շրջանում: <b>Թեմա 2.</b> Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը /Ք.ա. 9-6-րդ դդ/: Երվանդունիների թագավորությունը: <b>Թեմա 3.</b> Մեծ Հայքի թագավորության վերելքը Արտաշեսյան շրջանում: <b>Թեմա 4.</b> Արշակունիների թագավորությունը: <b>Թեմա 5.</b> Հայաստանը վաղ միջնադարում: <b>Թեմա 6.</b> Հայաստանը զարգացած միջնադարում: <b>Թեմա 7.</b> Հայաստանը ուշ միջնադարում:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հայոց պատմություն, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2012:</li> <li>2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Եր., 1975:</li> <li>3. Հայոց պատմություն հիմնահարցեր, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2000:</li> <li>4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Եր., 2009:</li> </ol>

1.0304/B08	2. Հայոց պատմություն -2	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.15/0/015	
6.4-րդ կիսամյակ	7. Ստուգաբար	
<p><b>8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը՝ 17-րդ դարից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածը:</b> Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտության ամենավերջին ձեռքբերումների մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն մեր ապագայի կառուցման գործածելու նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Հայոց պատմությունը դիտարկվում է համաշխարհային պատմության համատեքստում:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ձևավորել հստակ պատկերացում հայոց նոր և նորագույն պատմության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին,</li> <li>• ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն,</li> <li>• ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների ուսումնասիրման, քննարկման և ներկայացման համար:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b> <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. վերաբրտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը,</li> <li>2. նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:</li> <li>2. արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում:</li> </ol> <p><b>գ. քննիչական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. տարբերակելու և գնահատելու հայոց պատմության որոշակի օրինաչափությունները, ինչը ևս հնարավորություն կտա ապագայում ճիշտ կողմնորոշվելու:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույթները.</b> <b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: <b>Գ5.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ,</p>		

աշխատելու թիվում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
<b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն,</li> <li>• սեմինար,</li> <li>• ռեֆերատ,</li> <li>• անհատական և խմբային առաջադրանքներ:</li> </ul>
<b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b> Ստուգաբքը անցկացվում է բանավոր, նախապես տրված հարցաշարի շրջականում:
<b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b> <b>Թեմա 1.</b> Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: <b>Թեմա 2.</b> Ռուսաստանի ներթափանցումը Անդրկովկաս 19-րդ դարի սկզբին: <b>Թեմա 3.</b> Հայկական հարցի միջազգայնացումը: <b>Թեմա 4.</b> Ազատագրական խմբակների, կազմակերպությունների ու քաղաքական-ազգային կուսակցությունների ձևավորումը: <b>Թեմա 5.</b> Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: <b>Թեմա 6.</b> Իրավիճակը Հայաստանը 20-րդ դարի սկզբին: Արևմտահայության Մեծ Եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: <b>Թեմա 7.</b> Հայաստանը 1917թ. ռուսական հեղափոխությունների շրջանում: <b>Թեմա 8.</b> Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.: <b>Թեմա 9.</b> Խորհրդային Հայաստանը 1920-1991թթ.: <b>Թեմա 10.</b> Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: <b>Թեմա 11.</b> Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:
<b>14.Հիմնական գրականության ցանկ</b> <ol style="list-style-type: none"> <li>1. Հայոց պատմություն, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2012:</li> <li>2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Եր., 1975:</li> <li>3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2000:</li> <li>4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Եր., 2009:</li> </ol>

1.0105/B04	2.Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.30 /0/0	
6.4-րդ կիսամյակ	7.Ստուգաբք	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> ուսումնասիրել կենսոլորտի կառուցվածքի տեսական հիմնահարցերը և «մարդ-կենսոլորտ» համակարգում նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կարող են գնահատել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, որպես հասարակության գործունեության արդյունք և նախագուշացնել լուր կամ կանխարգելելու անթրոպոգեն գործունեության ոչ ցանկալի հետևանքները: Նպաստել հասկանալու էկոլոգիական հիմնախնդիրների էությունը և զարգացնել այդ խնդիրները լուծելու ունակությունը: Սովորողներին նախապատրաստել աշխարհայացքի ինքնուրույն ընտրության:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսանողներին տալ հիմնարար գիտելիքներ՝ էկոլոգիայի հիմնական հասկացությունների և օրենքների, էկոլոգիական համակարգերի և գործընթացների, շրջակա միջավայրի էկոլոգիական հնարավորությունների, բնական և տեխնոգեն միջավայրերի, ժամանակակից զարգացման տենդենցների, էկոլոգիական մշակույթի, որպես գործոնի ձևավորման, էկոլոգիական ճգնաժամերի, էկոլոգիայի բնագավառում միջազգային իրավական նորմերի, Հայաստանի Հանրապետությունում գործող էկոլոգիական օրենսդրության մասին,</li> <li>• ուսանողների մոտ զարգացնել հմտություններ բնագիտությունից, էկոլոգիայից, բնապահպանությունից՝ ձևավորելով դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու ունակությունները, տրամաբանական և գիտական լեզվամտածողությունները, եզրակացություն անելու կարողությունները,</li> <li>• դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն՝ մարդկության և բնական միջավայրի նկատմամբ:</li> </ul>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. սահմանելու էկոլոգիայի հիմնական հասկացությունները, էկոլոգիական հիմնական և կարևոր օրենքները, սկզբունքները, օրինաչափությունները և կանոնները,</li> <li>2. նշելու շրջակա միջավայրի զարգացման կոնցեպցիաները և թվարկելու մթնոլորտի, ջրոլորտի և հողոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցություն ունեցող աղտոտող նյութերը և ներկայացնելու նրանց վերլուծության մեթոդները,</li> <li>3. բացատրելու, թե ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ բնակչության վրա շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. էկոլոգիական գնահատական տալու շրջակա միջավայրի հիմնական գործոններին,</li> <li>2. նախագուշակական միջոցառումներ ներկայացնելու գերծ պահելու շրջակա միջավայրը էկոլոգիական</li> </ol>		

<p>աղետներինց,</p> <p>3. անցկացնելու մոնիթորինգ և գնահատելու տարածաշրջանի էկոլոգիական իրավիճակը, համապատասխան եզրակացություն տալ այն նպաստող գործոնների մասին, որոնք կբարելավեն տարածաշրջանի էկոլոգիան:</p> <p><b>գ. քնդիսանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ցուցաբերելու ինքնուրույն ուսումնասիրելու ունակություն:</li> <li>2. հետազոտություններ անելու, ստացած տեղեկությունը արհեստավարժ օգտագործելու խնդիրների լուծման նպատակով:</li> <li>3. տվյալ էկոհամակարգի վրա կիրառելու կանխատեսման մեթոդը՝ որոշելու նրա վրա այս կամ այն գործոնի ազդեցությունը:</li> </ol>
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> <p><b>Գ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ5.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• պասիվ դասխոսություն,</li> <li>• ակտիվ դասխոսություն, հարց ու պատասխան, զրույց,</li> <li>• ինտերակտիվ դասխոսություն՝ «Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում,</li> <li>• հարց ու պատասխան,</li> <li>• բանավեճ,</li> <li>• զրույց:</li> </ul>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Բանավոր քննում ըստ նախապես ներկայացված հարցաշարի կամ դասախոսի կողմից առաջադրված թեմայով ռեֆերատի:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Էկոլոգիայի համառոտ պատմությունը: Էկոլոգիայի կառուցվածքը, առարկան և օբյեկտը: Լիբիխի, մինիմումի, Վիյամի գործոնների անկախության և Շելֆորդի տոլերանտության օրենքները: <b>Թեմա 2.</b> Էկոհամակարգի գործունեության սկզբունքները: Էկոհամակարգի կառուցվածքը: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ /ավտոտրոֆներ, հետերոտրոֆներ/: <b>Թեմա 3.</b> Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները: Կենսական, ոչ կենսական, մարդածին, սահմանափակող գործոններ: Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին: <b>Թեմա 4.</b> Էներգիայի և նյութերի հոսքը Էկոհամակարգում: Էկոհամակարգերի էներգետիկական դասակարգումը: Էներգիայի և նյութերի փոխանցումը Էկոհամակարգերում, էներգիայի կորուստները սննդային շղթաներում: Ազոտի, ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի շրջանառությունը: <b>Թեմա 5.</b> Մարդու առողջության էկոլոգիական ասպեկտները: Միջավայրի քիմիական, կենսաբանական աղտոտումը, միջավայրի աղտոտումը աղմուկով, սննդամթերքների աղտոտումը: Գյուղատնտեսական և ուրբանիստական համակարգեր: <b>Թեմա 6.</b> Անսպառ և սպառվող պաշարները: Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Արդյունաբերության առաջընթացը և բնապահպանության հիմնախնդիրները: Արդյունաբերության էկոլոգիացման սկզբունքները: <b>Թեմա 7.</b> Քարոլորտի կառուցվածքը: Մթնոլորտի կառուցվածքը, նշանակությունը: Ջուրը երկրի վրա և նրա հատկությունները: Կենսոլորտի կառուցվածքը: Հողը, նրա կառուցվածքը և նշանակությունը բնության մեջ: <b>Թեմա 8.</b> Պոպուլյացիայի բնութագիրը: Ծնելիություն և մահացություն, պոպուլյացիայի սեռային կազմը: պոպուլյացիաների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը, զիջատիչ-զոն փոխհարաբերությունը: <b>Թեմա 9.</b> Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները և դրա էկոլոգիական հետևանքները: Ջրոլորտի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Քարոլորտի և բնահողի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Երկրի կլիմայի փոփոխության և անապատացման հիմնախնդիրները:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Խոյեցյան Ա., Մովսեսյան Հ., Փիրումյան Գ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Եր., 2010:</li> <li>2. Գրիգորյան Ա., Աղասյան Ա., ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ներկա վիճակը, Եր., 2008</li> <li>3. Մելքումյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ, Եր., 2010:</li> <li>4. Շահինյան Մ., Թամրազյան Ն., Էկոլոգիա, Եր., 2002:</li> <li>5. Вало́ва В., Основы экологии: Учебное пособие. -5-е изд., Москва, «Дашков и К» 2005..</li> </ol>

1.0305/B05	2.Ռուսաց լեզու-1	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/30/0	
6.2-ին կիսամյակ	7.Ստուգարք	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> ուսանողի մոտ ձևավորել բանավոր և գրավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ, ելնելով հաղորդակցման հիմնական պահանջմունքներից:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• սովորեցնել ռուսաց գրական լեզվի նորմերը,</li> <li>• ձևավորել մասնագիտական բառապաշար:</li> </ul>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու ծրագրով նախատեսված քերականական նյութը,</li> <li>2. ներկայացնելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար,</li> <li>3. կիրառելու ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կարդալու, պատմելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր գրքերից, թերթերից, ամսագրերից:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</li> <li>2. գնահատելու, վերլուծելու և գուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,</li> <li>3. օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:</li> </ol>		
<p><b>10.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• քննարկում /բանավեճ,</li> <li>• համագործակցային աշխատանք,</li> <li>• էվրիստիկական մեթոդ,</li> <li>• մտազբոս,</li> <li>• ինդուկտիվ մեթոդ</li> <li>• դեդուկտիվ մեթոդ,</li> <li>• վերլուծական մեթոդ,</li> <li>• խոսքային կամ բանավոր մեթոդ,</li> <li>• գրավոր մեթոդ,</li> <li>• բացատրական մեթոդ:</li> </ul>		
<p><b>11.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</b></p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</p> <p><b>Գ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p>		
<p><b>12.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Հնչյունաբանություն: Չայնավորների և բաղաձայնների դասակարգումը: Արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: <b>Թեմա 2.</b> Բառագիտություն. բառիմաստ, մեհիմաստ և բազմիմաստ բառեր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Դարձվածքներ: <b>Թեմա 3.</b> Բառակազմություն, բառի ձևաբանական կազմը /արմատներ, ածանցներ, վերջավորություններ, նրանց ուղղագրությունը/: <b>Թեմա 4.</b> Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/: Խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյական անուն, քերականական կարգերը, գոյականի ուղղագրությունը: Սծական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թվական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Դերանուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բայ, քերականական կարգերը, ուղղագրությունը:</p>		
<p><b>13.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p>Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:</p>		
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., 2004.</li> <li>2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь., П. Б. Балаян, Л. А. Тер-Саркисян, Б. С. Ходжумян, Ер., 2015.</li> <li>3. Учебные пособия по специальности.</li> </ol>		



1.0305/B10	2.Ռուսաց լեզու -2	3.2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/30/0	
6.3-րդ կիսամյակ	7.Ստուգարք	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> ապահովել և կատարելագործել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ռուսերեն լեզվով մասնագիտական ոլորտներում հաղորդակցվելու հմտությունների ձևավորում,</li> <li>• մասնագիտական բառապաշարի զարգացում,</li> <li>• մասնագիտական գրականության և տարբեր նյութերի հետ աշխատելու հմտությունների զարգացում:</li> </ul>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. գործածելու տվյալ մասնագիտության տերմինային համակարգը,</li> <li>2. կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,</li> <li>3. գործածելու մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու սնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,</li> <li>2. կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,</li> <li>3. վերարտադրելու մասնագիտական տեքստը, նաև ներկայացնելու նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ:</li> <li>4. թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը,</li> <li>5. զանազանելու մասնագիտական հատուկ շարահյուսական կառուցվածքները:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. գնահատելու, վերլուծելու և գուզադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,</li> <li>2. օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:</li> </ol>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</b></p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությունում:</p> <p><b>Գ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքերի իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> <p><b>Գ8.</b> Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:</p>		
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• քննարկում /բանավեճ/,</li> <li>• համագործակցային աշխատանք,</li> <li>• էվրիստիկական մեթոդ,</li> <li>• մտազրոհ,</li> <li>• ինդուկտիվ մեթոդ,</li> <li>• դեդուկտիվ մեթոդ,</li> <li>• վերլուծական մեթոդ,</li> <li>• խոսքային կամ բանավոր մեթոդ,</li> <li>• գրավոր մեթոդ,</li> <li>• բացատրական մեթոդ:</li> </ul>		
<p><b>12.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ձևաբանություն: Դերբայ, դերբայական դարձված, ուղղագրությունը: Մակբայ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Կապեր, շաղկապներ, մասնիկներ, ձայնարկություններ, քերականական կարգերը, ուղղագրությունը: <b>Թեմա 2.</b> Շարահյուսություն. շարահյուսության հիմնական միավորները /բառակապակցություն, նախադասու թյանդամներ/: Պարզ նախադասություն, դասակարգումը, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները: Բարդ նախադասություն, դասակարգումը, տեսակները: <b>Թեմա 3.</b> Մասնագիտական տեքստ, կառուցվածքը, տվյալ մասնագիտության տերմինային համակարգը,</p>		

մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները: <b>Թեմա 4.</b> Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրները: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները:
<b>13.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b> Ստուգարքն անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:
<b>14.Հիմնական գրականության ցանկը</b> 1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., 2004. 2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь. П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян. Ер., 2015. 3. Учебные пособия по специальности.

1.0001/B06	2.Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3. 2 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.15/15/0	
6.1-ին կիսամյակ	7.Ստուգարք	
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b>  <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b>              1. սահմանելու և մեկնաբանելու, ինտեգրելի ֆունկցիաների և ինտեգրալի հատկությունները:  <b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b>              1. հետազոտելու թվային շարքերի զուգամիտությունը,              2. հաշվելու անորոշ և որոշյալ ինտեգրալներ,              3. կիրառելու մաթեմատիկական խնդիրների հետազոտման մեթոդները տնտեսագիտության մեջ,  <b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b>              1. կիրառելու ստացած մաթեմատիկական գիտելիքները տնտեսագիտության խնդիրներում:</p>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>  <b>Ա1.</b> Ներկայացնելու վերլուծությունների մաթեմատիկական կանոնները և հնարքները,  <b>Բ3.</b>Կիրառելու մաթեմատիկական հասկացությունները, սիմվոլները քանակական և որակական հարաբերությունների մեկնաբանման համար,  <b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:  <b>Գ5.</b>Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:  <b>Գ6.</b>Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p>		
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն</li> <li>• սեմինար,</li> <li>• անհատական աշխատանք:</li> </ul>		
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>  <b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:  <b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:  <b>Եզրափակիչ քննություն.</b> Բանավոր՝ առավելագույնը <b>9 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 4 հարց. 2 տեսական հարց (1-ինը՝ 3 միավոր և 2-րդը՝ 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 2 միավոր):  <b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>3 միավոր</b>, կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռք բերումների համար 1,5 և ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1,5 միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p>		
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b>  <b>Թեմա 1.</b> Ֆունկցիայի էքստրեմումի անհրաժեշտ և բավարար պայմանները: <b>Թեմա 2.</b> Դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմները՝ Ռոլի, Լագրանժի և Կուշիի թեորեմները: <b>Թեմա 3.</b> Թեյլորի բանաձևը և նրա մնացորդային անդամը: <b>Թեմա 4.</b> Ֆունկցիայի գրաֆիկի ասիմպտոտները: Ֆունկցիայի գրաֆիկի ուռուցիկությունը, շրջման կետեր: <b>Թեմա 5.</b> Անընդհատ ֆունկցիայի մեծագույն և փոքրագույն արժեքները հատվածում: Մեկ փոփոխականի ֆունկցիայի գրաֆիկի կառուցման փուլերը: <b>Թեմա 6.</b> Նախնական ֆունկցիա և անորոշ ինտեգրալ: Անորոշ ինտեգրալի հատկությունները: <b>Թեմա 7.</b> Մասերով ինտեգրման և փոփոխականի փոխարինման բանաձևերը անորոշ ինտեգրալում: <b>Թեմա 8.</b> Որոշյալ ինտեգրալի</p>		

սահմանումը, կորագիծ սեղանի մակերեսի հաշվումը, տնտեսագիտական խնդիրներ: **Թեմա 9.** Դարբուի գումարները և նրանց հատկությունները: Որոշյալ ինտեգրալի գոյության անհրաժեշտ և բավարար պայմանը: **Թեմա 10.** Ինտեգրելի ֆունկցիաների դասերը՝ անընդհատ ֆունկցիայի և մոնոտոն, սահմանափակ ֆունկցիայի ինտեգրելիությունը: **Թեմա 11.** Որոշյալ ինտեգրալի հատկությունները: Միջին արժեքի թեորեմ: **Թեմա 12.** Փոփոխական վերին սահմանով ինտեգրալի անընդհատությունը, դիֆերենցելիությունը: **Թեմա 13.** Մասերով ինտեգրման և փոփոխականի փոխարինման բանաձևերը որոշյալ ինտեգրալում: **Թեմա 14.** Որոշյալ ինտեգրալի կիրառությունները բնագիտությունում և տնտեսագիտությունում: **Թեմա 15.** Անիսկական ինտեգրալներ: I և II սեռի անիսկական ինտեգրալների գույամիտությունը: **Թեմա 16.** Սովորական դիֆերենցիալ հավասարումների տեսության տարրերը:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Գևորգյան Գ. և ուրիշներ, Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք, հ. 2, Եր., 2003:
2. Ղազարյան Հ. և ուրիշներ, Սովորական դիֆերենցիալ հավասարումներ, Եր., 2002:
3. Ղազարյան Հ. և ուրիշներ, Սովորական դիֆերենցիալ հավասարումների խնդրագիրք, Եր., 1987:
4. Սովիսյան Յու., Բարձրագույն հանրահաշիվ, Եր., 1983:
5. Օհանյան Վ., Մաթեմատիկական անալիզ: Դասախոսություններ, առաջին մաս, Եր., 2008:

1.0201/B18	2.Տնտեսագիտության տեսություն-1	3.9 ECTS կրեդիտ
------------	--------------------------------	-----------------

4.6 ժամ/շաբ.	5.45/0/45	
--------------	-----------	--

6.1-ին կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատումով	
-----------------	-------------------------	--

**8.Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիքներ հաղորդել տնտեսագիտության տեսության միկրո մակարդակին առնչվող տնտեսագիտական հասկացությունների, հիմնարար սկզբունքների յուրացման, տնտեսագիտական փաստարկները և հիմնահարցերը հասկանալու, գնահատելու և կիրառելու վերաբերյալ:**

**Դասընթացի խնդիրներն են.**

- ուսանողներին բավարար չափով գիտելիքներ և ունակություններ տալ տնտեսագիտության տեսության հիմնարար սկզբունքներին տիրապետելու և դրանք միկրոմակարդակում կիրառելու համար,
- ստեղծել անհրաժեշտ հիմքեր միկրոտնտեսագիտական դասընթացների յուրացման համար:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. Տնտեսագիտական բազային հասկացությունների,
2. Տնտեսական ինստիտուտների, օրենքների,
3. Շուկայի պարամետրերի և շուկայական մոդելների,
4. Մպառողների և ապրանքատերերի վարքագծերի,
5. Ռեսուրսների շուկաների առանձնահատկությունների,
6. Շուկայական հիմնական մոդելների,
7. Շուկայի ձախողումների և դրանց կարգավորման ուղիների վերաբերյալ:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. տնտեսական իրավիճակները վերլուծելու,
2. տեսական գիտելիքները կիրառելու:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. տնտեսագիտական խնդիրներ լուծելու,
2. մասնագիտական վերլուծություններ կատարելու,
3. տնտեսական իրավիճակներ մեկնաբանելու:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Մ7.** Բացահայտելու տնտեսագիտական տարբեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումները:

**Բ1.** Կիրառելու տնտեսամաթեմատիկական անալիզի մեթոդները և գործիքակազմը արդի տնտեսական հիմնախնդիրների մոդելավորման համար:

**Բ3.** Կիրառելու մաթեմատիկական հասկացությունները, սիմվոլները քանակական և որակական հարաբերությունների մեկնաբանման համար:

**Գ8.** Կիրառելու SZZ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:

**Գ9.** Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն,
- հարցում,
- քննարկումներ,

<ul style="list-style-type: none"> <li>• խնդիրների լուծում, տնային առաջադրանքի կատարում,</li> <li>• խմբային աշխատանք,</li> <li>• ինքնուրույն աշխատանք:</li> </ul>
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>1-ին ընթացիկ քննություն.</b> Բաղադրիչներն են՝ 2 տեսական հարց, 1 խնդիր: Գնահատման քայլը՝ 0.5-առավելագույնը 4 միավոր:</li> <li>• <b>2-րդ ընթացիկ քննություն.</b> Բաղադրիչներն են՝ 2 տեսական հարց, 1 խնդիր: Գնահատման քայլը՝ 0.5 -առավելագույնը 4 միավոր:</li> <li>• <b>Եզրափակիչ քննություն. առավելագույնը 9 միավոր,</b> 3 տեսական հարց, որոնցից առաջինը-4, երկրորդը -3 և երրորդը- 2 միավոր: Գնահատման քայլը՝ 0.5 միավոր:</li> <li>• <b>Ընթացիկ ստուգում</b> առավելագույնը 3 միավոր</li> </ul>
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Տնտեսագիտության ներածություն: <b>Թեմա 2.</b> Շուկայական համա-կարգը: Պահանջարկը, առաջարկը և շուկայական հավասարակշռությունը: <b>Թեմա 3.</b> Պահանջարկի և առաջարկի առաձգականությունները: <b>Թեմա 4.</b> Սպառողի վարքի վերլուծությունը: <b>Թեմա 5.</b> Արտադրողի վարքը և տեխնոլոգիայի ընտրությունը: Արտադրական ֆունկցիան: <b>Թեմա 6.</b> Արտադրության ծախսերը: <b>Թեմա 7.</b> Մրցակցային ձեռնարկությունները և մրցակցային շուկաները: <b>Թեմա 8.</b> Մենաշնորհը շուկայական տնտեսությունում: <b>Թեմա 9.</b> Անկատար մրցակցությունը. մենաշնորհային մրցակցությունը և օլիգոպոլիս: <b>Թեմա 10.</b> Արտադրության գործոնների շուկան. աշխատանքը, հողը և կապիտալը:</p>
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Տնտեսագիտության տեսություն: Ուս. Ձեռնարկ, Հ.Աղաջանյան, Եր. 2021:</li> <li>2. К.Р.Макконнелл, С.Л.Брю, Ш.М.Флинн, Экономикс, 18-ое изд., М., 2011.</li> <li>3. Курс экономической теории, под ред. А.В.Сидоровича, М., 2009.</li> </ol> <p><b>Լրացուցիչ գրականություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>4. Մարգարյան Հ., Մարգարյան Հ., Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ, 2-րդ հրատ., Եր., 2017:</li> <li>5. Нуреев Р., Сборник задач по микроэкономике, М., 2003.</li> </ol>

<b>1.0201/B22</b>	<b>2.Տնտեսագիտության տեսություն-2</b>	<b>3.9 ECTS կրեդիտ</b>
<b>4.6 ժամ/շաբ.</b>	<b>5.45/0/45</b>	
<b>6.2-րդ կիսամյակ</b>	<b>7.Եզրափակիչ գնահատումով</b>	
<p><b>8.Դասընթացի նպատակն է լուսաբանել շուկայական տնտեսության՝ որպես ամբողջական համակարգի գործառնության մակրոտնտեսական օրինաչափությունները, տալ անհրաժեշտ գիտելիքներ և օժանդակել բավարար ունակությունների ձևավորմանը մակրոտնտեսական իրավիճակները վերլուծելու և հետազայում ուսուցանվող տնտեսագիտական մյուս դասընթացների նյութը առավել հիմնավոր յուրացնելու համար:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսանողներին բավարար չափով գիտելիքներ և ունակություններ տալ տնտեսագիտության տեսության հիմնարար սկզբունքներին տիրապետելու և դրանք վերլուծության միջոցով մակրոմակարդակում կիրառելու համար,</li> <li>• ստեղծել անհրաժեշտ հիմքեր մակրոտնտեսագիտական դասընթացների յուրացման համար:</li> </ul>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները,</li> <li>2. բացատրելու մակրոտնտեսական հավասարակշռության մոդելները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. վերլուծելու պետության տնտեսական քաղաքականության նպատակները և եղանակները,</li> <li>2. մեկնաբանելու տնտեսական քաղաքականության արդյունավետության գնահատման չափանիշները:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. մեկնաբանելու միկրոտնտեսագիտական հիմնարար հասկացությունները և սկզբունքները և դրանք կիրառելու միկրոտնտեսագիտական և մակրոտնտեսագիտական, ինչպես նաև ճյուղային ու գործառնական բնույթի տեսական, գործնական և հատուկ դասընթացներում:</li> </ol>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա7.</b> Բացահայտելու տնտեսագիտական տարբեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումները:</p> <p><b>Ա8.</b> Մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, քննարկելու գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները:</p> <p><b>Բ1.</b> Կիրառելու տնտեսամաթեմատիկական անալիզի մեթոդները և գործիքակազմը արդի տնտեսական</p>		

<p>հիմնախնդիրների մոդելավորման համար:  <b>Բ3.</b> Կիրառելու մաթեմատիկական հասկացությունները, սիմվոլները քանակական և որակական հարաբերությունների մեկնաբանման համար:  <b>Բ5.</b> Քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները:  <b>Գ8.</b> Կիրառելու SZZ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:  <b>Գ9.</b> Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն /ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, դասախոսության նյութի տրամադրում, լսարանային ցուցադրությունների կազմակերպում/,</li> <li>• սեմինար պարապմունքներ /ակտիվ հարցադրումների և քննարկումների կազմակերպում՝ սոցիալական և կրթական հաղորդակցման գիտատեսական հիմունքների կիրառմամբ/,</li> <li>• ինքնուրույն աշխատանք /ռեֆերատներ, անհատական առաջադրանքներ/:</li> </ul>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր քննություն՝ <b>4 միավոր</b> առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է երեք հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 1 և 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:</li> <li>• <b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր քննություն՝ <b>4 միավոր</b> առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է երեք հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2 և 1 միավոր: Միավորների քայլը 0.5 է:</li> <li>• <b>Եզրափակիչ քննություն.</b> բանավոր՝ <b>9 միավոր</b> առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է երեք հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:</li> <li>• <b>Ընթացիկ ստուգում-3:</b></li> </ul>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ազգային արդյունքը: Ազգային հաշիվների համակարգը: <b>Թեմա 2.</b> Մակրոտնտեսական կայունությունը և տատանումները: <b>Թեմա 3.</b> Հիմնական մակրոտնտեսական կախվածությունները: <b>Թեմա 4.</b> Ամբողջական ծախսումները և արտադրության հավասարակշիռ ծավալը: <b>Թեմա 5.</b> Ամբողջական պահանջարկը և ամբողջական առաջարկը: Հավասարակշռությունը «AD-AS» մոդելում և դրա փոփոխությունները: <b>Թեմա 6.</b> Ֆիսկալ քաղաքականությունը: <b>Թեմա 7.</b> Փողը և բանկային գործը: Դրամավարկային քաղաքականությունը: <b>Թեմա 8.</b> Ընդհանուր հավասարակշռությունը՝ «IS-LM» մոդելը: <b>Թեմա 9.</b> Տնտեսական աճը: <b>Թեմա 10.</b> Մակրոտնտեսական քաղաքականությունը և տեսությունը. բանավիճային հարցեր:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Մենքյու Ն., Մակրոէկոնոմիկա, Եր., 1997:</li> <li>2. Макконелл К., Брю С., Экономикс: принципы, проблемы и политика, М, 2009.</li> <li>3. Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Հայկ Սարգսյան, Հասմիկ Մարգարյան. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ: Գիտ. խմբ.՝ Հ.Աղաջանյան, Գ.Գալստյան, (երկրորդ հրատարակություն, լրամշակված և վերախմբագրված): - Եր., 2017:</li> <li>4. Курс экономической теории: учеб. пособие для студентов вузов /под ред. А.В.Сидоровича/; МГУ 3-е изд. – Москва, 2007.</li> <li>5. Агапова Т., Серегина С., Макроэкономика: Учебник МГУ, М., 2009.</li> </ol>

1.0105/B20	2.Գծային հանրահաշիվ և անալիտիկ երկրաչափություն	3.6 ECTS կրեդիտ
4.4 ժամ/շաբ.	5.30/30/0	
6.1-ին կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատումով	
<p><b>8. Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել վերլուծական երկրաչափության գիտելիքների անհրաժեշտ հենք՝ գծային հանրահաշիվի, մաթեմատիկական անալիզի դասընթացներում և որոշ տնտեսական մոդելներում օգտագործելու համար:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ծանոթացնել ուղղի, հարթության հավասարումներին, ինչպես նաև մատրիցաներին, որոշիչներին և նրանց որոշ հատկություններին,</li> <li>• գծային հավասարումների և անհավասարումների համակարգերի լուծման մեթոդներին, տալ ստացված լուծման մեկնաբանությունը և պատկերել հնարավորության դեպքում:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. բացատրելու գծային հավասարումների համակարգերի լուծման Գաուսի և Կրամերի եղանակները,</li> </ol>		

<p>2. սահմանելու որոշիչը, հակադարձ և տրանսպոնացված մատրիցները:</p> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <p>1. կատարելու գործողություններ վեկտորների և մատրիցների հետ, լուծել գծային հավասարումների և անհավասարումների համակարգեր,</p> <p>2. հաշվելու տրված վեկտորների սկալյար, վեկտորական և խառն արտադրյալները, չվերասերված մատրիցի հակադարձը,</p> <p>3. հաշվելու երկու ուղիղների, երկու հարթությունների, ուղղի և հարթության կազմած անկյունը, հատման կետը, կետի հեռավորությունն ուղղից և հարթությունից:</p> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <p>1. կիրառելու ստացած մաթեմատիկական գիտելիքները գործնականում,</p> <p>2. կիրառելու ստացած մաթեմատիկական գիտելիքները տնտեսագիտության մեջ:</p>
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրյունքները.</b></p> <p><b>Ա1.</b> Ներկայացնելու վերլուծությունների մաթեմատիկական կանոնները և հնարքները:</p> <p><b>Գ8.</b> Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:</p> <p><b>Գ9.</b> Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ</li> <li>• խմբային աշխատանքներ</li> <li>• անհատական աշխատանք:</li> </ul>
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> Բանավոր՝ առավելագույնը <b>9 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 4 հարց. 2 տեսական հարց (1-ինը՝ 3 միավոր և 2-րդը՝ 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 2 միավոր):</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>3 միավոր</b>, կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռք բերումների համար 1,5 և ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1,5 միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p>
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից</b></p> <p><b>Թեմա 1.</b> Մատրիցներ և որոշիչներ: <b>Թեմա 2.</b> Գծային հավասարումների համակարգ: <b>Թեմա 3.</b> Վեկտորական հանրահաշիվ: <b>Թեմա 4.</b> Գծային արտապատկերումներ: <b>Թեմա 5.</b> Ուղղի հավասարումը: <b>Թեմա 6.</b> Շրջան և էլիպս: <b>Թեմա 7.</b> Հիպերբոլ և պարաբոլ: <b>Թեմա 8.</b> Ուղղի և հարթության հավասարումը տարածության մեջ:</p>
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Փիլիպոսյան Վ., Օհնիկյան Հ., Վերլուծական երկրաչափության խնդրագիրք, Եր., 2011:</li> <li>2. Գ.Հակոբյան, Վերլուծական երկրաչափության և գծային հանրահաշիվի խնդրագիրք, տնտեսագետների համար:</li> <li>3. Беклемишев Д., Курс аналитической геометрии и линейной алгебры, ФИЗМАТЛИТ, 2005.</li> <li>4. Ильязова Д., Линейная алгебра и аналитическая геометрия.теория и практика, Ульяновск, 2012.</li> <li>5. Малугин В., Математика для экономистов. Линейная алгебра, М., 2006.</li> <li>6. Ефимов Н., Краткий курс аналитической геометрии,М.,ФИЗМАТЛИТ, 2014.</li> </ol>

1.0104/ B21	2.Տնտեսագիտական ինֆորմատիկա – 1	3.3 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/30/0	
6.2-րդ կիսամյակ	7.Առանց եզրաձակիչ գնահատման	
<p><b>8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել Excel ծրագրային փաթեթով խորը տնտեսագիտական վերլուծություններ կատարելու հմտությունները և սովորեցնել կիրառել դրանք հետազոտական աշխատանքների իրականացման և մասնագիտական գործունեության ընթացքում:</b></p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսանողներին տալ ընդհանուր տեղեկություններ Excel ծրագրային փաթեթի կառուցվածքի, գործիքների և հնարավորությունների մասին,</li> <li>• բացահայտել ժամանակակից համակարգչի դերն ու կարևորությունը տնտեսագիտական վերլուծություններ կատարելիս,</li> </ul>		



<ul style="list-style-type: none"> <li>• ծանոթացնել Excel համակարգով տնտեսագիտական, մենեջմենթի և մարքետինգի խնդիրներ լուծելու, ըստ կատարած հաշվարկների ստացված տվյալների գրաֆիկներ կառուցելու, տեսակավորելու հնարավորություններին:</li> </ul>
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b>  <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. թվարկելու Excel ծրագրային փաթեթի կառուցվածքը, գործիքներն և հնարավորությունները,</li> <li>2. վերարտադրելու և ստեղծելու էլեկտրոնային աղյուսակներ,</li> <li>3. ստացած գիտելիքները կիրառելու տնտեսագիտական, մենեջմենթի և մարքետինգի խնդիրները համակարգչի օգնությամբ լուծելիս:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. օգտագործելու Excel ծրագրային փաթեթի հնարավորությունները,</li> <li>2. էլեկտրոնային աղյուսակով կատարելու հաշվարկային աշխատանքներ՝ կիրառելով ստանդարտ ֆունկցիաներ և տրամաբանական գործողություններ,</li> <li>3. կազմելու ձեռնարկության ծախսերի հաշվման ծրագիր,</li> <li>4. մոդելավորելու և վերլուծելու տնտեսագիտական գործընթացները ծրագրային փաթեթների միջոցով:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,</li> <li>2. գործնականում տեղին և արդյունավետ կիրառել գիտելիքները, ձևակերպել խնդիրներ և լուծել:</li> </ol>
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b>  <b>Ա6.</b> Համեմատելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները և ներկայացնելու մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը,  <b>Բ10.</b> Կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ՝ կիրառելով տարբեր համակարգչային ծրագրեր,  <b>Գ8.</b> Կիրառելու SZZ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:  <b>Գ9.</b> Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• լաբորատոր աշխատանքներ,</li> <li>• տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ,</li> <li>• թեստ:</li> </ul>
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• 2 ընթացիկ քննություն՝ առավելագույնը 8 միավոր,</li> <li>• ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը 5 միավոր,</li> <li>• ընթացիկ ստուգում՝ առավելագույնը 4 միավոր,</li> <li>• մասնակցություն՝ առավելագույնը 3 միավոր:</li> </ul>
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b>  <b>Թեմա 1.</b> MS Excel աղյուսակային խմբագիր: <b>Թեմա 2.</b> Դիագրամների կառուցում MS Excel միջավայրում:  <b>Թեմա 3.</b> Ստանդարտ ֆունկցիաները MS Excel միջավայրում: <b>Թեմա 4.</b> Աշխատանք տվյալների բազաների հետ MS Excel միջավայրում: <b>Թեմա 5.</b> Տեղեկատվության պաշտպանություն:</p>
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կոսեմյան Ս., MS Excel աղյուսակային խմբագիր (գործնական ձեռնարկ): Ուսումնական ձեռնարկ, Եր., 2017:</li> <li>2. Սարգսյան Վ. և ուրիշներ, Համակարգչային առաջադրանքներ և խնդիրներ Ինֆորմատիկայի հիմունքներ (ըստ կիրառման ոլորտի) առարկայից: Եր., 2018:</li> <li>3. G. Harvey, “Excel 2019 All-in-One For Dummies”, 2019.</li> <li>4. J. Walkenbach, “Excel 2016 Bible”, 2016.</li> <li>5. Вильямс, Microsoft Excel, СПб, Питер, 2008.</li> </ol>

1.0104/ B28	2.Տնտեսագիտական ինֆորմատիկա – 2	3.3 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.0/30/0	
6.3-րդ կիսամյակ	7.Առանց եզրափակիչ գնահատման	
<p>8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել Excel ծրագրային փաթեթով խորը տնտեսագիտական վերլուծություններ կատարելու հմտությունները և սովորեցնել կիրառել դրանք հետազոտական աշխատանքների իրականացման և մասնագիտական գործունեության ընթացքում:</p>		

<p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ծանոթացնել MS EXCEL միջավայրում VBA մակրոսներին,</li> <li>• ձևավորել ծրագրեր ստեղծելու հմտություններ,</li> <li>• սովորեցնել տարբեր տնտեսագիտական խնդիրների լուծման նպատակով ընտրել համապատասխան այգորիթմ:</li> </ul>
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b>  <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու ծրագրային կոդեր,</li> <li>2. բացատրելու vba-ծրագրավորման լեզվի հիմունքները,</li> <li>3. վերլուծելու և բացատրելու գործնական էթիկայի կանոնները և տնտեսագիտական խնդիրների մաթեմատիկական մոդելների լուծումները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կազմելու ձեռնարկության ծախսերի հաշվման ծրագիրը,</li> <li>2. օգտագործելու VBA ծրագրավորման լեզվի հնարավորությունները:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. հավաքագրելու, վերլուծելու և պահպանելու տնտեսագիտական խնդիրների մաթեմատիկական մոդելների լուծման կարևորագույն արդյունքները:</li> </ol>
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա6.</b> համեմատելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները և ներկայացնելու մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը,</p> <p><b>Բ9.</b> կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարբեր համակարգչային ծրագրեր,</p> <p><b>Գ8.</b> Կիրառելու SZZ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:</p> <p><b>Գ9.</b> Կերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ինքնուրույն աշխատանք</li> <li>• թեստ</li> <li>• զեկույց</li> <li>• ծրագրերի մշակում և ավտոմատացում:</li> </ul>
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. 2 ընթացիկ քննություն՝ առավելագույնը 8 միավոր,</li> <li>2. ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը 5 միավոր,</li> <li>3. ընթացիկ ստուգում՝ առավելագույնը 4 միավոր,</li> <li>4. մասնակցություն՝ առավելագույնը 3 միավոր</li> </ol>
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1՝</b> VBA ծրագրավորման լեզուն և նրա հիմնական տարրերը: <b>Թեմա 2՝</b> VBA լեզվի օպերատորները: <b>Թեմա 3՝</b> VBA պրոցեդուրաներ և ֆունկցիաներ: <b>Թեմա 4՝</b> VBA ֆինանսական, վիճակագրական, մաթեմատիկական ֆունկցիաների կիրառությունը տնտեսագիտական հետազոտություններում: <b>Թեմա 5՝</b> VBA-ն որպես օբյեկտային կողմնորոշմամբ ծրագրավորման լեզու:</p>
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. G. Harvey, “Excel 2019 All-in-One For Dummies”, 2019.</li> <li>2. M. Berenson, D. Levine and T. Krehbiel, Basic Business Statistics, Pearson Ed., 2012.</li> <li>3. J. Walkenbach, “Excel 2016 Bible”, 2016.</li> <li>4. Слепцова Л.Д., Программирование на VBA в Microsoft Office 2010. М. : Издательский дом “Вильямс”, 2010.</li> <li>5. Уокенбах Джон, Профессиональное программирование на VBA в Excel 2010. : Пер. с англ. М. : издательский дом “Вильямс”, 2011.</li> </ol>

1.0104/B29	2.Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ	3.6 ECTS կրեդիտ
4.4 ժամ/շաբ.	5.30/30/0	
6.4-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատումով	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> ուսանողների մոտ ձևավորել տարբեր բնագավառներում առաջացած հիմնական գործնական խնդիրների մաթեմատիկական մոդելների կառուցման, դրանց միջոցով այդ խնդիրների լուծման</p>		

<p>եղանակների հետազոտման և կիրառման ունակություն:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ծանոթացնել գործույթների հետազոտում առարկայի հիմնախնդիրներին,</li> <li>• ծանոթացնել տնտեսական տարբեր երևույթների և գործընթացների ուսումնասիրման համար կիրառվող հիմնական տնտեսա-մաթեմատիկական մոդելներին,</li> <li>• բացատրել տարբեր տնտեսագիտական խնդիրներ լուծելու մեթոդները:</li> </ul>
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <p>1. ներկայացնելու գործույթների հետազոտման խնդիրների, մաթեմատիկական մոդելների կառուցման հանրահաշվական և երկրաչափական եղանակները:</p> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <p>1. կատարելու գծային ծրագրավորման, հոսքային և խաղային խնդիրների լուծման ալգորիթմական հետազոտումը,</p> <p>2. կիրառելու հիմնական ալգորիթմները գործնական խնդիրները լուծելիս,</p> <p>3. վերլուծելու առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակները:</p> <p><b>գ. քննհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <p>1. թիմում աշխատելու, համագործակցելու ունակություններ:</p>
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա6.</b> Համեմատելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները և ներկայացնելու մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը:</p> <p><b>Բ9.</b> Կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարբեր համակարգչային ծրագրեր:</p> <p><b>Գ9.</b> Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ</li> <li>• շնորհանդեսներ</li> <li>• գործնական աշխատանք</li> <li>• ռեֆերատ</li> <li>• ինքնուրույն խնդիրների լուծումներ:</li> </ul>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> Բանավոր՝ առավելագույնը <b>9 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 4 հարց. 2 տեսական հարց (1-ինը՝ 3 միավոր և 2-րդը՝ 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 2 միավոր):</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>3 միավոր</b>, կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռք բերումների համար 1,5 և ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1,5 միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p>
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b>Կոորդինատային համակարգեր: <b>Թեմա 2.</b>Ուղիղ գիծը հարթության վրա: <b>Թեմա 3.</b>Երկրորդ կարգի կորեր: <b>Թեմա 4.</b>Մատրիցներ և որոշիչներ: <b>Թեմա 5.</b>Գծային հավասարումների համակարգեր (Գաուսի մեթոդը, Կրամերի կանոնը): <b>Թեմա 6.</b>Գծային տարածություններ: Բազիս և չափողականություն: <b>Թեմա 7.</b>Վեկտորների գծային կախվածությունը: Մատրիցի ռանգը: <b>Թեմա 8.</b> Գծային օպերատորներ: <b>Թեմա 9.</b>Քառակուսային ձևեր:<b>Թեմա 10.</b>Էվկլիդեսյան տարածություններ: Օրթոգոնալ բազիս:</p>
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ</b></p> <p>1. Տոնոյան Ռ., Գործույթների հետազոտման մաթեմատիկական խնդիրներ, Եր., 1999:</p> <p>2. Սահակյան Մ., Սարգսյան Հ., Սարգսյան Ս., Տոնոյան Ռ., Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ, I հատոր, Եր., 1997:</p> <p>3. Սահակյան Մ., Բեկնազարյան Ն., Հակոբյան Հ., Քերոբյան Խ., Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ, II հատոր, Գործույթների հետազոտումը տնտեսության կառավարման խնդիրներում, Եր., 2001:</p> <p>4. Սահակյան Մ., Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ III Գործույթների հետազոտումը տնտեսության կառավարման խնդիրներում, Խնդիրներ և վարժություններ, Եր., 2001:</p>

5. Տոնոյան Ռ., Դիսկրետ մաթեմատիկայի դասընթաց, Եր., 1999:  
 6. Харари, Теория графов, М, 1979.

1.0104/B23	2. Հետազոտության պլանավորում և մեթոդներ	3.3 ECTS կրեդիտ
4.2 Ժամ/շաբ.	5.30/0/0	
6.2-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> ուսանողներին գիտելիքներ հաղորդել հետազոտության պլանավորման և մեթոդների վերաբերյալ:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնել հետազոտության նպատակը և կառուցվածքը</li> <li>• ուսումնասիրել պլանավորման փուլերը</li> <li>• ծանոթանալ հետազոտության մեթոդներին և դրանց կիրառմանը:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. սահմանելու հետազոտության պլանավորման կարևորությունը,</li> <li>2. ներկայացնելու հետազոտության փուլերը և դրանց իրականացման քայլերը,</li> <li>3. բացատրելու հետազոտության մեթոդաբանությունը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կատարելու հետազոտության թեմայի գրագետ ընտրություն,</li> <li>2. կիրառելու հետազոտության մեթոդները,</li> <li>3. վերլուծելու հավաքագրված տեղեկատվությունը, կատարելու եզրակացություններ և առաջարկություններ:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. թիմում աշխատելու, համագործակցելու ունակություններ</li> <li>2. Հետազոտության տարբեր տեսակներ պլանավորելու,</li> <li>3. Հետազոտությունները գնահատելու կարողություն:</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա6.</b> Համեմատելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները և ներկայացնելու մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը:</p> <p><b>Բ9.</b> Կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարբեր համակարգչային ծրագրեր:</p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:</p> <p><b>Գ8.</b> Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:</p> <p><b>Գ9.</b> Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>		
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ</li> <li>• շնորհանդեսներ</li> <li>• գործնական աշխատանք</li> <li>• հարցում</li> <li>• ինքնուրույն աշխատանք</li> <li>• խմբային աշխատանք</li> <li>• քննարկում:</li> </ul>		
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>2 ընթացիկ քննություն՝</b> առավելագույնը <b>8 միավոր,</b></li> <li>• <b>ինքնուրույն աշխատանք՝</b> առավելագույնը <b>5 միավոր,</b></li> <li>• <b>ընթացիկ ստուգում՝</b> առավելագույնը <b>4 միավոր,</b></li> <li>• <b>մասնակցություն՝</b> առավելագույնը <b>3 միավոր</b></li> </ul>		
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Գիտությունը և գիտական հետազոտությունը: <b>Թեմա 2.</b> Գիտական հետազոտությունների մեթոդաբանությունը: <b>Թեմա 3.</b> Գիտահետազոտական աշխատանքների նախապատրաստական փուլը: <b>Թեմա 4.</b> Գիտական տեղեկատվության հավաքագրումը: <b>Թեմա 5.</b> Ուսանողների գիտական աշխատանքների պատրաստումը և ձևավորումը: <b>Թեմա 6.</b> Ուսանողական աշխատանքների պատրաստման և</p>		

պաշտպանության առանձնահատկությունները:
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Басаков М., От реферата до дипломной работы: Рекомендации студентам по оформлению текста: Учеб. пособие для студентов вузов и кол-леджей. – Ростов н/Д, 2001.</li> <li>2. Вахрин П., Методика подготовки и процедура защиты дипломных работ по специальности «Финансы и кредит»: Учеб. пособие. – М., 1999.</li> <li>3. Кузин Ф., Магистерская диссертация: Методика написания, правила оформления и процедура защиты: Практик. пособие для студентов магистрантов. – М., 1998.</li> <li>4. Сабитов Р., Основы научных исследований. Учебное пособие. Челябинск, 2002.</li> <li>5. Уваров А., Дипломные и курсовые работы по экономическим специальностям: Практик. советы по подготовке и защите, М., 2000.</li> </ol>

1.0105/B26	2. Մաթեմատիկական անալիզ – 3	3.9 ECTS կրեդիտ
4.6 ժամ/շաբ.	5.45/45/0	
6.3-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	

**8. Դասընթացի նպատակն է** ուսանողներին ներկայացնել մաթեմատիկական անալիզի առավել կիրառական, վերլուծական մասերը:

**Դասընթացի խնդիրներ են.**

- ձևավորել մաթեմատիկական հիմնարար պատրաստվածության անհրաժեշտ մակարդակ՝ տնտեսագիտական խնդիրների հետազոտությունների մեջ,
- կիրառահետազոտական խնդիրներ լուծելու ժամանակ օգտվել իրենց հայտնի մաթեմատիկական մեթոդներից,
- զարգացնել տրամաբանական անալիտիկ մտածողություն:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. սահմանելու դիֆերենցիալ հավասարումներն ու տարանջատել դրանց տեսակները, սահմանելու և տարանջատելու կրկնակի և կորագիծ ինտեգրալները,
2. ներկայացնելու մաթեմատիկական անալիզի կիրառահետազոտական մասերը:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. հաշվելու կրկնակի և կորագիծ ինտեգրալներ,
2. պարզելու դիֆերենցյալ հավասարման տեսակները և լուծել դրանք,
3. տարանջատելու և հաշվելու լրկալ, գլոբալ և պայմանական էքստրեմումները:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. կիրառելու յուրացրած մաթեմատիկական գաղափարները տնտեսագիտության մեջ:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.** Ներկայացնելու վերլուծությունների մաթեմատիկական կանոնները և հնարքները:

**Ա6.** Համեմատելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները և ներկայացնելու մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը:

**Բ1.** Կիրառելու տնտեսամաթեմատիկական անալիզի մեթոդները և գործիքակազմը արդի տնտեսական հիմնախնդիրների մոդելավորման համար:

**Բ3.** Կիրառելու մաթեմատիկական հասկացությունները, սիմվոլները քանակական և որակական հարաբերությունների մեկնաբանման համար:

**Գ8.** Կիրառելու SZZ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:

**Գ9.** Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություններ
- սեմինարներ:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**1-ին ընթացիկ քննություն.** գրավոր՝ առավելագույնը **4 միավոր**, միավորների քայլը 0,25 է:

**2-րդ ընթացիկ քննություն.** գրավոր՝ առավելագույնը **4 միավոր**, միավորների քայլը 0,25 է:

**Եզրափակիչ քննություն.** Բանավոր՝ առավելագույնը **9 միավոր** քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 4 հարց. 2 տեսական հարց (1-ինը՝ 3 միավոր և 2-րդը՝ 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 2 միավոր):

<p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>3 միավոր:</b></p> <p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b>  <b>Թեմա 1.</b>Առանց սահմանափակումների օպտիմիզացիա: <b>Թեմա 2.</b> Սահմանափակումներով օպտիմիզացիա. առաջին կարգի պայմանները: <b>Թեմա 3.</b> Սահմանափակումներով օպտիմիզացիա. առաջին կարգի պայմանները: <b>Թեմա 4.</b> Հումոգեն և հումոթետիկ ֆունկցիաներ: <b>Թեմա 5.</b> Գոգավոր և կիսագոգավոր (quasiconcave) ֆունկցիաներ: <b>Թեմա 6.</b> Տնտեսագիտական կիրառությունները:</p>
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ.</b></p> <p>1.Simon C. and Blume L., “Mathematics for Economists”, W. W. Norton &amp; Company, New York, 2010.  2.Hoy, M., Livernois, J., McKenna, C., Rees, R., &amp; Stengos, T. (2011). <i>Mathematics for economics</i>. MIT pr  3.R. Serrano and A. Feldman, “A Short Course in Intermediate Microeconomics with Calculus”, Cambridge University Cambridge, 2013.  4.Andréasson, N., Evgrafov, A., &amp; Patriksson, M. (2005). An introduction to optimization: Foundations and fundamental algorithms. <i>Chalmers University of Technology Press: Gothenburg, Sweden, 1</i>, 1-205.  5.Pemberton, M., &amp; Rau, N. (2011). <i>Mathematics for economists: an introductory textbook</i>. University of Toronto Press.  6.Sundaram, R. K. (1996). <i>A first course in optimization theory</i>. Cambridge university press.  7.Luptacik, M. (2010). <i>Mathematical optimization and economic analysis</i> (p. 307). New York, NY, USA:: Springer.  8.Takayama, A., &amp; Akira, T. (1985). <i>Mathematical economics</i>. Cambridge university press.</p>

<b>1.0105/B25</b>	<b>2.Հավանականությունների տեսություն</b>	<b>3.6 ECTS կրեդիտ</b>
<b>4.4 ժամ/շաբ.</b>	<b>5.30/30/0</b>	
<b>6.3-րդ կիսամյակ</b>	<b>7.Եզրափակիչ գնահատումով</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է,</b> ուսանողներին ծանոթացնել հավանականության գաղափարին (դասական, երկրաչափական, արքսիոմատիկ սահմանումներ), պատահական մեծությունների տեսակներին(դիսկրետ, անընդհատ) և նրանց թվային բնութագրիչներին, ինչպես նաև, նրանց կիրառություններին:</p> <p>Սողույի ուսումնասիրությունը նպատակ ունի ուսանողների մոտ <b>ձևավորել.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>✓ յուրահատուկ տրամաբանական մտածողություն՝ հավանականային և վիճակագրական գաղափարների միջոցով,</li> <li>✓ տիպային խնդիրների լուծման և դրանց արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ,</li> <li>✓ տրամաբանորոն վերլուծելու և մաթեմատիկորեն մոդելավորելու մշակույթ և կարողություններ,</li> <li>✓ առաջադրված խնդիրների լուծելիությունը հետազոտելու ունակություններ,</li> <li>✓ գրականությունից օգտվելու և յուրաքանչյուր թեմայի շրջանակներում անհրաժեշտ նյութերը փնտրելու հմտություններ:</li> </ul> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ուսանողներին ընկալելի դարձնել հավանականության գաղափարի սահմանումները և նրանց տարբերությունները</li> <li>• Սովորեցնել հաշվել պատահական մեծությունների թվային բնութագրիչները կիրառելով բաշխման ֆունկցիան և հավանականային խտության ֆունկցիան</li> <li>• Ուսանողներին տալ հիմնարար գիտելիքներ սահմանային թեորեմների, մարկովյան շղթաների և նրանց կիրառությունների վերաբերյալ</li> <li>• ուսումնասիրել պատահական փորձերի մաթեմատիկական մոդելների կառուցվածքը</li> <li>• կատարելագործել ուսանողների մոտ կիրառական խնդիրների լուծման համար ստացված գիտելիքների օգտագործման հմտությունները,</li> <li>• զարգացնել ուսանողների մոտ այն ունակությունները, որոնք օգնում են ընկալել տարբեր համակարգերում կիրառվող մաթեմատիկական մոդելների հավանականային ունիվերսալությունը:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. սահմանելու փորձ, նրա տարրական էլքերը, տալու հավանականության դասական, երկրաչափական, արքսիոմատիկ սահմանումները, պայմանական հավանականության սահմանումը,</li> <li>2. ներկայացնելու պատահական մեծությունների տեսակները/ դիսկրետ, անընդհատ, կիսաանընդհատ/</li> <li>3. սահմանելու պատահական մեծության թվային բնութագրիչները՝ մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, մոդա, մոմենտ, ասիմետրիա, պատահական մեծության բաշխման ֆունկցիա, բաշխման շաբթ:</li> <li>4. թվարկելու պատահական մեծությունների ֆունկցիաները՝ բաշխման ֆունկցիա, հավանականային խտության ֆունկցիա, բնութագրիչ ֆունկցիա</li> </ol>		

<p>5. ներկայացնելու մարկովյան շղթաները /համասեռ, ոչ համասեռ/ և նրանց համապատասխանող անցման մատրիցները:</p> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. թվարկելու «հավանականության» գաղափարի դասական, երկրաչափական, աքսիոմատիկ սահմանումների տարբերությունները, և նրանց կիրառմամբ կառուցելու պատահական մեծությունների բաշխման շարքերը,</li> <li>2. հաշվելու պատահական մեծությունների թվային բնութագրիչները՝ մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, միջին քառակուսային շեղում, մոդա, մեդիանա</li> <li>3. մեկնաբանելու սահմանային թեորեմները և ներկայացնելու նրանց կապը Բեռնուլիի թեորեմի հետ</li> <li>4. պատահական մեծությունների կիրառմամբ վիճակագրական խնդիրներ լուծելու:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Վերլուծելու և եզրահանգումներ անելու դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</li> <li>2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</li> <li>3. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</li> </ol>
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա3.</b> Բացատրելու վիճակագրական տվյալների կազմման և գրանցման ձևերը:</p> <p><b>Բ2.</b> Կատարելու գիտահետազոտական աշխատանքներ և գործնական վերլուծություններ օգտագործելով վիճակագրական և էկոնոմետրիկ մեթոդներ:</p> <p><b>Գ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ5.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ6.</b> Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջումները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p> <p><b>Գ8.</b> Կիրառելու SZZ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:</p>
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ,</li> <li>• գործնական պարապմունքներ,</li> <li>• քննարկումներ,</li> <li>• տնային և անհատական տնային առաջադրանքներ,</li> <li>• ստուգողական աշխատանքներ,</li> <li>• ինքնուրույն աշխատանքներ:</li> </ul>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>Շզրափակիչ քննություն.</b> Բանավոր՝ առավելագույնը <b>9 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 4 հարց. 2 տեսական հարց (1-ինը՝ 3 միավոր և 2-րդը՝ 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 2 միավոր):</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>3 միավոր</b>, կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռք բերումների համար 1,5 և ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1,5 միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ընտրանքների բազմություն, հավանականության դասական, երկրաչափական, աքսիոմատիկ սահմանումներ: <b>Թեմա 2.</b> Պայմանական հավանականություն, հավանականությունների բազմապատկման թեորեմ: <b>Թեմա 3.</b> Լրիվ հավանականության, Բայեսի բանաձև <b>Թեմա 4.</b> Բեռնուլիի փորձարկումների սխեմա, Բեռնուլիի բանաձև, Սահմանային թեորեմներ: <b>Թեմա 5.</b> Դիսկրետ պատահական մեծություններ, բաշխման օրենքներ: <b>Թեմա 6.</b> Պատահական մեծության բաշխման ֆունկցիա, հավանականային խտության ֆունկցիա, բնութագրիչ ֆունկցիա: <b>Թեմա 6.</b> Անընդհատ պատահական մեծություններ: Պատահական մեծությունների թվային բնութագրիչներ՝ մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, միջին քառակուսային շեղում, մոդա,</p>

մեդիանա: <b>Թեմա 7.</b> Մարկովյան շղթաներ:
<b>14. Հիմնական գրականության ցանկ.</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Б. В.Гнеденко. Курс теории вероятностей. (Изд. 6-е, перераб. и доп. М.: Наука. 1988).</li> <li>2. В. Е. Гмурман. Теория вероятностей и математическая статистика. М.: Высш. шк., 2003.</li> <li>3. Bertsekas, D.P. and Tsitsiklis, J.N., 2008. Introduction to probability (Vol. 2). Belmont, MA: Athena Scientific.</li> <li>4. DeGroot, M.H. and Schervish, M.J., 2012. Probability and statistics. Pearson Education.</li> <li>Feller, W., 2008. An introduction to probability theory and its applications (Vol. 2). John Wiley &amp; Sons.</li> </ol>

<b>1.0305/B24</b>	<b>2. Մասնագիտական անգլերեն – 1</b>	<b>3.3 ECTS կրեդիտ</b>
<b>4.2 Ժամ/շաբ.</b>	<b>5.0/30/0</b>	
<b>6.4-րդ կիսամյակ</b>	<b>7. Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> զարգացնել անգլերեն լեզվի գիտելիքների կառուցվածքային ճշգրտությունը, բանավոր սահունությունը և լեզվական համապատասխանությունը՝ այն օգտագործելով իրական գործնական իրավիճակներում:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսումնասիրել անգլերեն լեզվի քերականական առանձնահատկությունները,</li> <li>• ձևավորել անգլերեն լեզվով միջինից ցածր (pre-intermediate) մակարդակի բառապաշար:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու տնտեսագիտության և գործարարության ոլորտում կիրառվող մասնագիտական հենքային բառապաշարը և քերականական կաղապարները,</li> <li>2. ներկայացնելու մասնագիտական բնագիր նյութը ընթերցելով և ունկնդրելով ընկալելու և մեկնաբանելու սկզբունքները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կատարելու անգլերեն լեզվով գրավոր և բանավոր թարգմանություններ,</li> <li>2. կարողանալու կարդալ և վերլուծել մասնագիտական գրականությունը:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներդնելու անգլերեն բանավոր և գրավոր խոսքի գիտելիքներն ու հմտությունները հաղորդակցման տարբեր ոլորտներում</li> </ol>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Գ1.</b> Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությունում:</p> <p><b>Գ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> <p><b>Գ5.</b> Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p><b>Գ6.</b> Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p>		
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ</li> <li>• խմբային աշխատանք</li> <li>• անհատական աշխատանք:</li> </ul>		
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• <b>առաջին ընթացիկ քննություն</b> – առավելագույնը <b>4 միավոր</b> արժեքով</li> <li>• <b>երկրորդ ընթացիկ քննություն</b>- առավելագույնը <b>4 միավոր</b> արժեքով</li> <li>• <b>ինքնուրույն աշխատանք</b>՝ առավելագույնը <b>5 միավոր</b> արժեքով,</li> <li>• <b>ընթացիկ ստուգում</b>՝ առավելագույնը <b>4 միավոր</b> արժեքով,</li> <li>• <b>մասնակցություն</b>՝ առավելագույնը <b>3 միավոր</b> արժեքով:</li> </ul>		
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ուսուցանում: Ինչպե՞ս ներկայացնել փաստացի տեղեկատվություն: <b>Թեմա 2.</b> Նշաններ: Սահմանում և բացատրություն: <b>Թեմա 3.</b> Էթիկա: Նկարագրություն և բացատրություն: <b>Թեմա 4.</b> Փաստեր: Համեմատում և</p>		



<p>հակադրում:<b>Թեմա 5.</b> Լեզու և հաղորդակցություն: Ինչպե՞ս պատրաստել սլայդեր պրեզենտացիայի (շնորհանդեսի) համար: <b>Թեմա 6.</b> Աշխարհը, որտեղ ապրում ենք: Ինչպե՞ս ճանաչել գրագողությունը և գալ համաձայնության: <b>Թեմա 7.</b> Մեր վարքագիծը: Շնորհանդեսի մեջ հետ ու առաջ հղումներ տալը: <b>Թեմա 8.</b> Առողջություն: Պատճառ և հետևանք <b>Թեմա 9.</b> Տեղակայություն: Փաստարկ: <b>Թեմա 10.</b> Լեզու: Համառոտագրում և վերաձևակերպում:.</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>English for Academic Purposes Pre-Intermediate/B1 Student's Book and DVD-ROM Pack, Edward de Chazal and Louis Rogers, Oxford University Press, 1st Edition, 2015.</li> <li>Language Leader Coursebook (Pre-Intermediate), Ian Lebeau and Gareth Rees, Pearson Education, 2014.</li> <li>Academic Vocabulary in Use Edition with Answers, Michael McCarthy, Cambridge University Press, 2nd Edition, 2016.</li> </ol>

<b>1.0201/B27</b>	<b>2.Տնտեսագիտական մտքի պատմություն</b>	<b>3.6 ECTS կրեդիտ</b>
<b>4.4 ժամ/շաբ.</b>	<b>5.30/0/30</b>	
<b>6.3-րդ կիսամյակ</b>	<b>7.Եզրափակիչ գնահատումով</b>	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> օժանդակել ժամանակակից տնտեսագիտական սկզբունքների և հայեցակարգերի առավել համակողմանի ըմբռնմանը դրանց ձևավորումը, զարգացումը և փոխներգործությունները ներկայացնելու ու վերլուծելու միջոցով: Նպաստել անհրաժեշտ տեսական հենքի ձևավորմանը, ժամանակակից տնտեսական հիմնահարցերին արդյունավետ լուծումներ գտնելու համար:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>բացահայտել տնտեսական երևույթների և գործընթացների էությունը տարբեր տնտեսական դպրոցների տեսանկյունից,</li> <li>ուսումնասիրել տնտեսական համակարգերի զարգացման օրինաչափությունները, հասարակության և տնտեսության էվոլյուցիայի փոխկապվածությունը:</li> </ul>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ներկայացնելու մարդկության կողմից մինչ այժմ ձևակերպված և ներկայումս գոյություն ունեցող տնտեսագիտական մեկնաբանությունները և տեսությունները,</li> <li>բնութագրելու տնտեսվարման խնդիրների լուծման և ճանաչողության խորացման ու ընդլայնման գոյություն ունեցող կապը:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>զանազան տնտեսական իրավիճակներում ընտրելու արդյունավետ լուծումներ,</li> <li>կատարելու արդյունավետ ընտրություն տնտեսական կացությունը և վարվող տնտեսական քաղաքականությունը գնահատող գործիքակազմից:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>յուրացնելու ու վերիմաստավորելու միկրոտնտեսագիտական և մակրոտնտեսագիտական այլ դասընթացների, ինչպես նաև ճյուղային ու գործառնական բնույթի տեսական, գործնական և հատուկ դասընթացների նյութը:</li> </ol>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա7.</b>Բացահայտելու տնտեսագիտական տարբեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումները:</p> <p><b>Ա8.</b>Մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, քննարկելու գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները,</p> <p><b>Բ5.</b> Քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները,</p> <p><b>Գ8.</b>Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:</p> <p><b>Գ9.</b>Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>		
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>դասախոսություն /ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, դասախոսության նյութի տրամադրում, լսարանային ցուցադրությունների կազմակերպում/,</li> <li>սեմինար պարապմունքներ /ակտիվ հարցադրումների և քննարկումների կազմակերպում՝ սոցիալական և կրթական հաղորդակցման գիտատեսական հիմունքների կիրառմամբ/, ինքնուրույն աշխատանք /ռեֆերատներ, անհատական առաջադրանքներ/:</li> </ul>		
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր:</b></p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր:</b></p>		

<p><b>Եզրափակիչ քննություն.</b> Բանավոր՝ առավելագույնը <b>9 միավոր:</b>  <b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>3 միավոր :</b></p> <p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b>  <b>Թեմա 1.</b> Տնտեսագիտական մտքի պատմության ներածություն: <b>Թեմա 2.</b> Տնտեսագիտական միտքը Հին Աշխարհում: <b>Թեմա 3.</b> Տնտեսագիտական պատկերացումները Միջին Դարերում: <b>Թեմա 4.</b> Կապիտալիզմի սկզբնավորման փուլի տնտեսագիտական պատկերացումները: <b>Թեմա 5.</b> Դասական քաղաքատնտեսության սկիզբն Անգլիայում և Ֆրանսիայում: <b>Թեմա 6.</b> Ադամ Սմիթը և նրա «Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրությունը աշխատությունը: <b>Թեմա 7.</b> Շուկայական տնտեսության ինքնակարգավորման վարկածը, Ժ.Բ.Սեյ, Թ.Ռ.Մալթուս: <b>Թեմա 8.</b> Դավիթ Ռիկարդոյի քաղաքատնտեսական համակարգը: <b>Թեմա 9.</b> Ջոն Ստյուարտ Միլը և նրա «Քաղաքատնտեսության սկզբունքներ» աշխատությունը: <b>Թեմա 10.</b> Կարլ Մարքսի տնտեսագիտական տեսությունը: <b>Թեմա 11.</b> Պատմական ուղղությունը տնտեսագիտության մեջ: <b>Թեմա 12.</b> Մարժինալիզմը. սահմանային օգտակարության տեսությունը: <b>Թեմա 13.</b> Ալֆրեդ Մարշալի տնտեսագիտական տեսությունը: <b>Թեմա 14.</b> Ինստիտուցիոնալիզմ: <b>Թեմա 15.</b> Քեյնսյան տեսությունը: <b>Թեմա 16.</b> Նոր պահպանողական տեսությունները:</p> <p><b>14.Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Տնտեսագիտական մտքի պատմություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 2009:</li> <li>2. Блауг М., Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4 – е издание – Москва, “Дело Лтд” 1994.</li> <li>3. Տնտեսագիտական մտքի պատմության հիմունքները: Ուսումնական ձեռնարկ. / Գ.Ս. Գալստյան, Հ.Գ. Մարգարյան: - Եր., 2016.</li> <li>4. Жамс Э., История экономической мысли XX века, Москва, «ИЛ» 1959.</li> <li>5. Селигмен Б., Основные течения современной экономической мысли, Пер.с англ., Москва, «Прогресс» 1968.</li> </ol>
--

<b>1.0305/B32</b>	<b>2.Մասնագիտական անգլերեն – 2</b>	<b>3.3 ECTS կրեդիտ</b>
<b>4.2 Ժամ/շաբ.</b>	<b>5.0/30/0</b>	
<b>6.5-րդ կիսամյակ</b>	<b>7.Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> ձևավորել անգլերեն լեզվի միջնակարգ (intermediate) մակարդակի տեսական գիտելիքներ և մասնագիտական հաղորդակցման հմտություններ:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ընդլայնել հաղորդակցման ունակությունները՝ լսելու, խոսելու, կարդալու և գրելու մեջ,</li> <li>2. ուսումնասիրել բարդ քերականական կառուցվածքներ:</li> <li>3. ներկայացնել և բացատրել մասնագիտական բառապաշար:</li> </ol>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b>  <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու բարդ քերականական կառուցվածքները,</li> <li>2. թվարկելու մասնագիտական տերմիններ անգլերենով,</li> <li>3. ներկայացնելու մասնագիտական բնագիր նյութը ընթերցելով և ունկնդրելով ընկալելու և մեկնաբանելու սկզբունքները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. վերարտադրելու և մեկնաբանելու մասնագիտական նյութի հիմնական բովանդակությունը:</li> <li>2. քննարկելու տնտեսագիտության և գործարարության թեմաներով հարցեր՝ հիմնավորելով սեփական տեսակետը:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. օգտվելու տեղեկատվության զանազան աղբյուրներից՝ մասնագիտական տպագիր և էլեկտրոնային նյութեր:</li> <li>2. կազմելու տարատեսակ գործնական փաստաթղթեր:</li> <li>3. արդյունավետ կիրառելու համակարգչային հմտությունները:</li> </ol>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Գ1.</b> Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:</p> <p><b>Գ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p>		
<b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b>		

<ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն /ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, դասախոսության նյութի տրամադրում, լսարանային ցուցադրությունների կազմակերպում/,</li> <li>• սեմինար պարապմունքներ /ակտիվ հարցադրումների և քննարկումների կազմակերպում՝ սոցիալական և կրթական հաղորդակցման գիտատեսական հիմունքների կիրառմամբ/, ինքնուրույն աշխատանք /ռեֆերատներ, անհատական առաջադրանքներ/:</li> </ul>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b>  <b>առաջին ընթացիկ քննություն՝</b> առավելագույնը <b>4 միավոր,</b>  <b>երկրորդ ընթացիկ քննություն –</b> առավելագույնը <b>4 միավոր</b>  <b>ինքնուրույն աշխատանք՝</b> առավելագույնը <b>5 միավոր,</b>  <b>ընթացիկ ստուգում՝</b> առավելագույնը <b>4 միավոր,</b>  <b>մասնակցություն՝</b> առավելագույնը <b>3 միավոր:</b></p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b>  <b>Թեմա 1.</b> Գիտելիք: Ինչպե՞ս հասկանալ և ներկայացնել տեղեկատվությունը: <b>Թեմա 2.</b> Տարբերակներ և կիրառություններ: Ինչպե՞ս հետազոտել տեքստեր էսսեների համար: <b>Թեմա 3.</b> Կազմակերպվածություն: Հեռանկար և տեսակետ: <b>Թեմա 4.</b> Մոտիվացիա: Մահմանում և բացատրություն: <b>Թեմա 5.</b> Աշխատանք և հավասարություն: Դասընթացներին և քննարկումներին մասնակցությունը: <b>Թեմա 6.</b> Բնություն: Նկարագրություն: <b>Թեմա 7.</b> Իշխանություն: Զեկուցում և համառոտագրում: <b>Թեմա 8.</b> Աճ: Ինչպե՞ս օգտագործել աղբյուրները: <b>Թեմա 9.</b> Կապեր: Համատեքստավորում: <b>Թեմա 10.</b> Նորարարություն: Ինչպե՞ս տալ հղում: <b>Թեմա 11.</b> Սպառում: Համեմատություն և հակադրություն: <b>Թեմա 12.</b> Հակասություններ: Ինչպե՞ս հարցնել և տալ հավելյալ տեղեկատվություն: <b>Թեմա 13.</b> Հանցանք: Փաստարկ և վկայություն: <b>Թեմա 14.</b> Էներգիա: Խնդիր և լուծում: <b>Թեմա 15.</b> Առաջընթաց: Պատճառ և հետևանք:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ</b>  1. English for Academic Purposes Intermediate/B1+ Student's Book and DVD-ROM Pack, Edward de Chazal and Louis Rogers, Oxford University Press, 1st Edition, 2013.  2. Language Leader Coursebook (Intermediate), Ian Lebeau and Gareth Rees, Pearson Education, 2008.  3. Cambridge Academic English (Intermediate), Craig Thaine, Cambridge University Press, 2010.</p>

1.0201/B30	2."ՀԲ" Վիճակագրություն	3.6 ECTS կրեդիտ
4.4 ժամ/ շաբ.	5.30/30/0	
6.4-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատումով	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> ապագա մասնագետների մոտ ժամանակակից տնտեսության պահանջներին համապատասխան վիճակագրական տեսական գիտելիքների և պրակտիկ ունակությունների ձևավորում, տնտեսական երևույթների և գործընթացների վերլուծության համար անհրաժեշտ որակավորման ձեռքբերում:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ծանոթացնել տնտեսական երևույթների և գործընթացների միտումների և օրինաչափությունների ուսումնասիրման համար վիճակագրական ինֆորմացիայի հավաքման, մշակման, ընդհանրացման և վերլուծության ժամանակակից մեթոդներին,</li> <li>• բացատրել հիմնավորված կառավարչական որոշումների ընդունման համար վիճակագրական և տնտեսական գործընթացների կանխատեսման մեթոդների կիրառումը,</li> <li>• զարգացնել տեղեկատվության քանակական վերլուծության բազմաթիվ գիտական կանոնների, մեթոդների և հնարքների ըմբռնումը</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b>  <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. թվարկելու վիճակագրության խնդիրները՝ շուկայական տնտեսության պայմաններում,</li> <li>2. ներկայացնելու ազգային և արտասահմանյան վիճակագրական ծառայությունների ժամանակակից կազմակերպման սկզբունքները,</li> <li>3. բացատրելու վիճակագրության հասկացությունները, կատեգորիաները, տվյալների հավաքման, մշակման և վերլուծության մեթոդները,</li> <li>4. բացատրելու վիճակագրական կանխատեսման մեթոդները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կազմակերպելու և անցկացնելու վիճակագրական դիտումներ,</li> <li>2. կառուցելու վիճակագրական գրաֆիկներ և աղյուսակներ,</li> <li>3. հաշվարկելու և մեկնաբանելու վիճակագրական ցուցանիշներ,</li> <li>4. վերլուծել երևույթները և գործընթացները, գնահատել նրանց հնարավոր միտումները,</li> <li>5. գրելու հետազոտական աշխատանք իրականացված վերլուծության հիման վրա</li> <li>6. ձևակերպելու անցկացրած վերլուծությունից բխող եզրակացություններ:</li> </ol>		

<p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <p>1. կայացնելու որոշումներ կոնկրետ տնտեսական իրավիճակներում՝ ձեռքբերած գիտելիքների և հմտությունների հիման վրա:</p>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա3.</b> Բացատրելու վիճակագրական տվյալների կազմման և գրանցման ձևերը:</p> <p><b>Ա9.</b> Կապակցելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները,</p> <p><b>Բ2.</b> Կատարելու գիտահետազոտական աշխատանքներ և գործնական վերլուծություններ օգտագործելով վիճակագրական և էկոնոմետրիկ մեթոդներ:</p> <p><b>Բ6.</b> Տարբեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար ղեկավարի օգնությամբ իրականացնելու հետազոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր,</p> <p><b>Գ1.</b> Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:</p> <p><b>Գ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p>		
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն</li> <li>• սեմինար</li> <li>• ռեֆերատ</li> <li>• անհատական և խմբային առաջադրանքներ</li> <li>• հետազոտական առաջադրանք:</li> </ul>		
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ առավելագույնը <b>4 միավոր</b>, հարցատոմսը պարունակում է 4 խնդիր, յուրաքանչյուրը՝ 1-ական միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն.</b> թիմային կամ անհատական հետազոտական աշխատանքի պաշտպանություն <b>4 միավոր</b> առավելագույն արժեքով.</p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> Բանավոր՝ առավելագույնը <b>9 միավոր</b> քննական տոմսի համար, տոմսը պարունակում է 4 հարց. 2 տեսական հարց (1-ինը՝ 3 միավոր և 2-րդը՝ 2 միավոր), երկու խնդիր (1-ինը՝ 2 միավոր և 2-րդը՝ 2 միավոր):</p> <p><b>Ընթացիկ ստուգումներ.</b> առավելագույնը <b>3 միավոր</b>, կիսամյակի ընթացքում իրականացրած տնային առաջադրանքներից ձեռք բերումների համար 1,5 և ստուգողական աշխատանքներից ձեռք բերումների համար՝ 1,5 միավոր: Միավորների քայլը 0,25 է:</p>		
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Վիճակագրության առարկան, մեթոդը, խնդիրները և կազմակերպումը: <b>Թեմա 2.</b> Տվյալների հավաքագրում և ներկայացում: <b>Թեմա 3.</b> Հատվածավորում: <b>Թեմա 4.</b> Վիճակագրական բաշխումներ: <b>Թեմա 5.</b> Սահմանային թեորեմներ: <b>Թեմա 6.</b> Վստահելիության միջակայքեր: <b>Թեմա 7.</b> Հիպոթեզի և նշանակալիության ստուգում: <b>Թեմա 8.</b> Պարամետրի գնահատում և որակի վերահսկում: <b>Թեմա 9.</b> Բայեսյան վիճակագրություն:</p>		
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ</b></p> <p>1. Հովհաննիսյան Հ., Ֆահրադյան Մ., Սոցիալ-տնտեսական վիճակագրություն, Եր., 2000:</p> <p>2. Պետրոսյան Ա., Վիճակագրության ընդհանուր տեսություն, Եր., 2008:</p> <p>3. Statistics for Business and Financial Economics by Cheng-Few Lee.</p> <p>4. Basic Business Statistics: Concepts and Applications, Mark L. Berenson.</p> <p>5. Modern Mathematical Statistics with Applications, Jay L. Devore.</p> <p>6. DeGroot, M.H. and Schervish, M.J., 2012. Probability and statistics. Pearson Education.</p> <p>7. Principals of econometrics, Carter Hill, et all. 2011.</p>		

1.0201/B31	2.Ֆինանսներ – 1	3.9 ECTS կրեդիտ
4.6 ժամ/շաբ.	5.45/45/0	
6.4-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատումով	
8.Դասընթացի նպատակն է ներկայացնել ֆինանսների տնօրինման հիմնարար տեսական մոտեցումները,		

<p>ինչպես նաև գործնականում ցույց տալ տարբեր իրավիճակներում ֆինանսական որոշումների կայացման և կիրառման ձևերը, ներկայացնել պետական ֆինանսական համակարգի արդյունավետ գործունեության հիմնական նախադրյալները:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնել պետական ֆինանսական համակարգի կառուցվածքը,</li> <li>• ուսումնասիրել առանձին օղակների գործունեության առանձնահատկությունները,</li> <li>• ուսումնասիրել պետական ֆինանսների կենտրոնացման և օգտագործման հիմնական ուղղությունները:</li> </ul>
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները,</li> <li>2. բացատրելու ֆինանսների կառավարման ժամանակակից տեսությունները և ֆինանսական վերլուծության մեթոդները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները,</li> <li>2. ինքնուրույն կատարելու ֆինանսական գործակիցների վերլուծություն:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. անկախուն իրավիճակներում կիրառելու կառավարման հմտությունները:</li> </ol>
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա2.</b> Ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները:</p> <p><b>Ա8.</b> Մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, քննարկելու գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները:</p> <p><b>Բ5.</b> Քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները:</p> <p><b>Բ6.</b> Տարբեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար ղեկավարի օգնությամբ իրականացնելու հետազոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր:</p> <p><b>Բ8.</b> Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները:</p> <p><b>Գ1.</b> Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> <p><b>Գ2.</b> Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</p> <p><b>Գ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ4.</b> Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p>
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ</li> <li>• նախադեպերի վերլուծություն</li> <li>• խմբային աշխատանք:</li> </ul>
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր թեստային հարցեր և գործնական խնդիրներ, <b>4 միավոր առավելագույն</b> արժեքով, միավորների քայլը՝ 0.25:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն</b> գրավոր թեստային հարցեր և գործնական խնդիրներ, <b>3 միավոր առավելագույն</b> արժեքով, միավորների քայլը՝ 0.25:</p> <p><b>Ընթացիկ ստուգում</b> գրավոր թեստային հարցեր <b>2 միավոր առավելագույն</b> արժեքով, միավորների քայլը՝ 0.25].</p> <p><b>Մասնակցություն</b> .առավելագույնը՝ <b>3 միավոր արժեքով,</b></p> <p><b>Եզրափակիչ քննություն.</b> բանավոր տեսական հարցեր և գործնական խնդիրներ, <b>8 միավոր առավելագույն</b> արժեքով, միավորների քայլը՝ 0.25:</p>
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ֆինանսական հաշվարկների հիմունքներ: <b>Թեմա 2.</b> Փողի շուկա: <b>Թեմա 3.</b> Արժեթղթերի շուկա: <b>Թեմա 4.</b> Պարտատոմսերի շուկա: <b>Թեմա 5.</b> Բաժնետոմսերի շուկա: <b>Թեմա 6.</b> Մուրհակներ: <b>Թեմա 7.</b> Ածանցյալ ֆինանսական գործիքներ:</p>

**14. Հիմնական գրականության ցանկ**

1. Brealey R., Myers S., and Allen F., “Principles of Corporate Finance”, 13th edition, NY: McGraw Hill, New York, 2020
2. Ross S., Westerfield R. and Jordan B., “Fundamentals of Corporate Finance”, 12th edition, NY: McGraw Hill, New York, 2019
3. Berk J. and DeMarzo P., “Corporate Finance”, 5th edition, Global Edition Pearson Education, UK, 2021
4. Рынок ценных бумаг : учебник для академического бакалавриата под общей редакцией Н. И. Берзона. — 5-е изд., перераб. и доп. — Москва : Издательство Юрайт, 2019.
5. Финансовая математика: учебное пособие / Е.В. Ширшов, Н.И. Петрик, А.Г. Тutyгин, Т.В. Меньшикова. — 5-е изд., перераб. и доп. — М. : КНОРУС, 2010.
6. Корпоративные финансы и учет: понятия, алгоритмы, показатели: учебное пособие / В. В. Ковалев, Вит. В. Ковалев. — 3-е изд., перераб. и доп. — Москва : Проспект, 2020. — 992 с.
7. Финансовый менеджмент: теория и практика, Стоянова Е.С. (ред.), 6-е изд. - М.: Изд-во "Перспектива", 2010. - 656 с.
8. Մնացականյան Հ. Գ., Սահակյան Գ. Բ., «Ֆինանսների կառավարման հիմունքներ» ուսումնամեթոդական ձեռնարկ. - Եր.: «Աստղիկ» հրատ., 2016.

**14. Լրացուցիչ գրականության ցանկ**

Финансовый менеджмент: учебник / коллектив авторов; под ред. Н.И. Берзона и Т.В. Тепловой. — М. : КНОРУС, 2020.

1. Современные корпоративные финансы и инвестиции: монография, / П.Н. Брусов, Т.В. Филатова, Н.П. Орехова. — М. : 2020.
2. Задачи по финансовой математике: учебное пособие / П. Н. Брусов, П. П. Брусов, Н.П. Орехова, С. В. Скородулина. — 2-е изд., перераб. — М. , 2014.
3. Ehrhardt M. and Brigham E., “Financial Management: Theory and Practice”, 15th edition, Cengage Learning, 2017.
4. Mishkin F.S, Stanley G.E, “Financial Markets and Institutions”, 7th edition, The Prentice Hall series in finance, 2012.

1.0201/B33	2.Էկոնոմետրիկա- 1	3.6 ECTS կրեդիտ
4.4 Ժամ/շաբ.	5.30/30/0	
6.5-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատումով	
<p><b>8.Դասընթացի նպատակն է</b> տալ տնտեսագիտական հետազոտություն ներում քանակական և որակական էկոնոմետրիկ մեթոդների կիրառման համար անհրաժեշտ գիտելիքներ: Ներկայացնել էկոնոմետրիկ գործիքներ և տեխնիկաներ, որոնք թույլ կտան գնահատել տնտեսական մոդելների որակը:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• զարգացնել ժամանակակից մաթեմատիկական մտածողություն</li> <li>• ծանոթացնել տնտեսական-մաթեմատիկական և մաթեմատիկական-վիճակագրական մոդելներին և մեթոդներին:</li> </ul>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. գնահատելու համակարգչային փաթեթների կիրառությամբ իր կողմից ստեղծված մոդելների պարամետրերը,</li> <li>2. ներկայացնելու տնտեսագիտական հետազոտություններ իրականացնելու վիճակագրական մոտեցումները և էկոնոմետրիկ մոդելների տեսակները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. գնահատելու իր կողմից ստեղծված մոդելների պարամետրերը՝ կիրառելով համակարգչային փաթեթներ,</li> <li>2. ստուգելու վիճակագրական մեթոդների օգնությամբ մոդելների համապատասխանության և պարամետրերի վերաբերյալ տարբեր վարկածներ:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. լուծելու մի շարք գործնական տնտեսագիտական խնդիրներ էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ,</li> <li>2. տարբեր աղբյուրներից հայթայթելու տեղեկատվություն և դրանց հիման վրա կատարելու տնտեսագիտական վերլուծություններ:</li> </ol>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Բ1.</b> Կիրառելու տնտեսամաթեմատիկական անալիզի մեթոդները և գործիքակազմը արդի տնտեսական հիմնախնդիրների մոդելավորման համար:</p> <p><b>Բ2.</b> Կատարելու գիտահետազոտական աշխատանքներ և գործնական վերլուծություններ օգտագործելով</p>		

<p>վիճակագրական և էկոնոմետրիկ մեթոդներ:</p> <p><b>Բ7.</b> Մասնագիտական վերլուծություններով և հաշվարկներով գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, ներկայացնելու վերլուծությունից բխող եզրակացություններ:</p> <p><b>Բ8.</b> Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները:</p> <p><b>Բ10.</b> Կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարբեր համակարգչային ծրագրեր:</p> <p><b>Գ9.</b> Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>		
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ</li> <li>• գործնական համակարգչային դասընթացներ</li> <li>• խմբային աշխատանքներ (Stata փաթեթի կիրառմամբ),</li> </ul>		
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն.</b> գրավոր՝ թեստային հարցեր և գործնական խնդիրներ, <b>4 միավոր առավելագույն</b> արժեքով, միավորների քայլը՝ 0.25:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն</b> գրավոր՝ թեստային հարցեր և գործնական խնդիրներ, <b>3 միավոր առավելագույն</b> արժեքով, միավորների քայլը՝ 0.25:</p> <p><b>Ընթացիկ ստուգում.</b> գրավոր թեստային հարցեր <b>2 միավոր առավելագույն</b> արժեքով, միավորների քայլը՝ 0.25:</p> <p><b>Մասնակցություն</b>՝ առավելագույնը՝ <b>3 միավոր</b> արժեքով:</p> <p><b>Եզրափակիչ քննություն</b> բանավոր՝ տեսական հարցեր և գործնական խնդիրներ, <b>8 միավոր առավելագույն</b> արժեքով, միավորների քայլը՝ 0.25:</p>		
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից՝</b></p> <p><b>Թեմա 1.</b> Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության կրկնություն: <b>Թեմա 2.</b> Միագործոն գծային ռեգրեսիա: Գաուս-Մարկովի պայմանները և փոքրագույն քառակուսիների մեթոդը: <b>Թեմա 3.</b> Բազմագործոն գծային ռեգրեսիա: <b>Թեմա 4.</b> Հիպոթեզների տեսավորում z և t վիճակագրականներ: <b>Թեմա 5.</b> Կեղծ փոփոխականներ: <b>Թեմա 6.</b> Բազմակոլիներություն և հետորոսկեդաստիկություն: <b>Թեմա 7.</b> Փոփոխականների տրանսֆորմացիա և ոչ գծային ռեգրեսիա: <b>Թեմա 8.</b> Առավելագույն ճշմարտանմանության մեթոդ: <b>Թեմա 9.</b> Մոնտե-Կարլո սիմուլյացաների մեթոդ: <b>Թեմա 10.</b> Բայեսյան մեթոդներ: <b>Թեմա 11.</b> Eviews էկոնոմետրիկ փաթեթի միջոցով էկոնոմետրիկ հետազոտությունների իրականացում:</p>		
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Wooldridge, Jeffrey M. Introductory Econometrics: A Modern Approach. 3rd ed. Mason, OH: Thomson/South-Western, 2006. ISBN: 9780324289787 (Հիմնական գիրք)</li> <li>2. Goldberger, Arthur S. A Course in Econometrics. Cambridge, MA: Harvard University Press, 1991. ISBN: 9780674175440. (Առավել խորացված և համեմատաբար բարդ գիրք)</li> <li>3. DeGroot, Morris H., and Mark J. Schervish. Probability and Statistics. 3rd ed. Boston, MA: Addison-Wesley, 2001. ISBN: 9780201524888. (Վիճակագրության և հավանականությունների տեսության կրկնության համար)</li> <li>4. Dougherty, C.. Introduction to econometrics. 5<sup>th</sup> ed. Oxford University Press, 2011, ISBN: 9780199676828</li> <li>5. Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А., Эконометрика, Москва, изд. “Дело”. 2004</li> <li>6. Кристофер Доугерти, Введение в эконометрику, М: ИНФРА-М, 1999</li> </ol> <p><b>Անհրաժեշտ ծրագրային ապահովում.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Eviews 9 կամ ավելի բարձր (պարտադիր)</li> <li>2. Stata 10 կամ ավելի նոր (պարտադիր)</li> <li>3. Matlab 2014b կամ ավելի նոր (ոչ պարտադիր)</li> <li>4. R/R-studio (ոչ պարտադիր)</li> </ol>		

1.0201/B37	2. "ՀԲ" էկոնոմետրիկա – 2	3.6 ECTS կրեդիտ
4.4 ժամ/շաբ.	5.30/30/0	
6.6-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> զարգացնել ժամանակային շարքեր կիրառող ոլորտներում էմպիրիկ հետազոտություն իրականացնելու համար անհրաժեշտ հմտությունները:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսումնասիրել ժամանակային շարքերի բովանդակությունը և դրանց կիրառման ոլորտները,</li> <li>• ներկայացնել էկոնոմետրիկ գործիքներ և տեխնիկաներ, որոնք թույլ կտան գնահատել ժամանակային շարքեր կիրառող տնտեսական մոդելների որակը:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p>		

<p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>ներկայացնելու տնտեսագիտական հետազոտություններ իրականացնելու վիճակագրական մոտեցումները և էկոնոմետրիկ մոդելների տեսակները,</li> <li>ստուգելու վիճակագրական մեթոդների օգնությամբ մոդելների համապատասխանության և պարամետրերի վերաբերյալ տարբեր վարկածներ:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>գնահատելու համակարգչային փաթեթների կիրառությամբ իր կողմից ստեղծված մոդելների պարամետրերը,</li> <li>կատարելու eviews փաթեթի միջոցով ժամանակային շարքերի վերլուծություն և կանխատեսում:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>լուծելու էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ մի շարք գործնական տնտեսագիտական խնդիրներ,</li> <li>հայթայթելու տարբեր աղբյուրներից տեղեկատվություն և դրանց հիման վրա կատարել տնտեսագիտական վերլուծություններ:</li> </ol>
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա7.</b>Բացահայտելու տնտեսագիտական տարբեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումները:</p> <p><b>Բ1.</b> Կիրառելու տնտեսամաթեմատիկական անալիզի մեթոդները և գործիքակազմը արդի տնտեսական հիմնախնդիրների մոդելավորման համար:</p> <p><b>Բ2.</b> Կատարելու գիտահետազոտական աշխատանքներ և գործնական վերլուծություններ օգտագործելով վիճակագրական և էկոնոմետրիկ մեթոդներ:</p> <p><b>Բ7.</b>Մասնագիտական վերլուծություններով և հաշվարկներով գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, ներկայացնելու վերլուծությունից բխող եզրակացություններ:</p> <p><b>Բ8.</b>Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները:</p> <p><b>Բ10.</b> Կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարբեր համակարգչային ծրագրեր:</p> <p><b>Գ9.</b>Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնասության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>դասախոսություններ</li> <li>գործնական համակարգչային դասընթացներ</li> <li>խմբային աշխատանք (Eviews փաթեթի) կիրառմամբ:</li> </ul>
<p><b>12.Գնահատման մեթոդներ և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն .</b> գրավոր՝ թեստային հարցեր և գործնական խնդիրներ, <b>4 միավոր</b> առավել արժեքով, միավորների քայլը՝ 0.25:</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն</b> թիմային կամ անհատական հետազոտական աշխատանքի պաշտպանություն <b>4 միավոր</b> առավելագույն արժեքով.</p> <p><b>Ընթացիկ ստուգում.</b> գրավոր՝ թեստային հարցեր <b>2 միավոր առավելագույն</b> արժեքով, միավորների քայլը՝ 0.25:</p> <p><b>Մասնակցություն.</b> առավելագույնը՝ <b>2 միավոր</b>:</p> <p><b>Եզրափակիչ քննություն .</b> բանավոր՝ տեսական հարցեր և գործնական խնդիրներ, <b>8 միավոր</b> առավել արժեքով, միավորների քայլը՝ 0.25:</p>
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Առաջին կարգի տարբերություն և գործողություններ լագերի հետ: Տարբերակային հավասարումներ:</p> <p><b>Թեմա 2.</b> Ստացիոնար ARMA պրոցեսներ: <b>Թեմա 3.</b> Կանխատեսում: <b>Թեմա 4.</b> Ոչ ստացիոնար ժամանակային շարքեր: Միավոր արմատի խնդիրը: <b>Թեմա 5.</b> Ռեգրեսիվ դինամիկ մոդելներ: <b>Թեմա 6.</b> Վեկտոր ավտոռեգրեսիվ մոդելներ և կոինտեգրացիոն մոդելներ: Միավոր ճշգրտման մոդելը: Պատճառականություն: <b>Թեմա 7.</b> Պանելային տվյալների գծային մոդելներ: Ֆիքսված և պատահական էֆեկտներով մոդելներ:</p>
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ.</b></p> <ol style="list-style-type: none"> <li>Hamilton J.D., Time series analysis (Vol. 2). Princeton: Princeton university press, 1994.</li> <li>Helmut Lütkepohl, New Introduction to Multiple Time Series Analysis, Library of Congress Control Number: 2005, 927322.</li> <li>Канторович Г.Г., Лекции по курсу «Анализ временных рядов». Экономический журнал ВШЭ, 2003.</li> <li>Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А., Эконометрика, Москва, изд. «Дело». 2004.</li> </ol>

1. 0201/B36	2. "ՀԲ" Ֆինանսներ – 2	3. 6 ECTS կրեդիտ
-------------	-----------------------	------------------



4. 4 ժամ/շաբ.	5. 30/30/0
6. 5-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով
<p><b>8. Դասընթացի նպատակն է՝</b> ներկայացնել ֆինանսների տնօրինման հիմնարար տեսական մոտեցումները, տարբեր գործնական իրավիճակներում ֆինանսական որոշումների կայացման և կիրառման ձևերը, ինչպես նաև ֆինանսական վերլուծության գործիքները, մեթոդները և սկզբունքները տարաբնույթ հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնել ֆինանսների կառավարման անհրաժեշտությունը, նպատակները և խնդիրները,</li> <li>• ուսանողներին ծանոթացնել ֆինանսական որոշումների կայացման մեխանիզմների և մեթոդների հետ,</li> <li>• ուսանողներին զինել ֆինանսական ցուցանիշները հասկանալու, վերլուծելու և մեկնաբանելու կարողություններով,</li> <li>• ուսանողներին սովորեցնել օգտվել մասնագիտական գրականությունից, վիճակագրական տվյալների աղբյուրներից և հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ այլ գործիքներից:</li> </ul>	
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները:</li> <li>2. Բացատրելու ֆինանսների կառավարման ժամանակակից տեսությունները և ֆինանսական վերլուծության մեթոդները:</li> </ol> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները:</li> <li>2. Կատարելու ինքնուրույն ֆինանսական վերլուծություններ:</li> </ol> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատելու թիմում:</li> <li>2. Կառուցելու բանավոր և գրավոր փաստարկված խոսք:</li> <li>3. Մտածելու և արտահայտվելու ստեղծագործաբար:</li> </ol>	
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա8.</b> Մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, քննարկելու գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները:</p> <p><b>Բ5.</b> Քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները:</p> <p><b>Բ6.</b> Տարբեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար ղեկավարի օգնությամբ իրականացնելու հետազոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր:</p> <p><b>Բ7.</b> Մասնագիտական վերլուծություններով և հաշվարկներով գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, ներկայացնելու վերլուծությունից բխող եզրակացություններ:</p> <p><b>Բ8.</b> Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները:</p> <p><b>Գ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ8.</b> Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:</p> <p><b>Գ9.</b> Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>	
<p><b>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ</li> <li>• իրավիճակային սցենարների վերլուծություն</li> <li>• տնային առաջադրանքներ</li> <li>• խմբային/անգատական հետազոտական աշխատանք:</li> </ul>	
<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքները գնահատելու համար իրականացվում են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն .</b> գրավոր՝ թեստային հարցեր և գործնական խնդիրներ, <b>4 միավոր</b> առավել արժեքով, միավորների քայլը՝ 0.25].</p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն</b> թիմային կամ անհատական հետազոտական աշխատանքի պաշտպանություն <b>4 մի</b> առավելագույն արժեքով].</p> <p><b>Մասնակցություն .</b> առավելագույնը՝ <b>3 միավոր</b></p> <p><b>Եզրափակիչ քննություն .</b> բանավոր՝ տեսական հարցեր և գործնական խնդիրներ, <b>9 միավոր</b> առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25:</p>	
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ներդրումային նախագծերի արդյունավետության գնահատում: <b>Թեմա 2.</b> Կապիտալի արժեք և կառուցվածք: <b>Թեմա 3.</b> Բիզնեսի գնահատում: <b>Թեմա 4.</b> Ռիսկ և եկամտաբերություն: <b>Թեմա 5.</b> Ֆինանսական</p>	

վերլուծություն: <b>Թեմա 6.</b> Ֆինանսական պլանավորում:
<b>14. Հիմնական գրականության ցանկ</b> 1. Brealey R., Myers S., and Allen F., “Principles of Corporate Finance”, 13th edition, NY: McGraw Hill, New York, 2020 2. Ross S., Westerfield R. and Jordan B., “Fundamentals of Corporate Finance”, 12th edition, NY: McGraw Hill, New York, 2019 3. Berk J. and DeMarzo P., “Corporate Finance”, 5th edition, Global Edition Pearson Education, UK, 2021 4. Корпоративные финансы и учет: понятия, алгоритмы, показатели: учебное пособие / В. В. Ковалев, Вит. В. Ковалев. — 3-е изд., перераб. и доп. — Москва : Проспект, 2020. 5. Финансовый менеджмент: учебник / коллектив авторов; под ред. Н.И. Берзона и Т.В. Тепловой. — М. : КНОРУС, 2020. 6. Современные корпоративные финансы и инвестиции: монография, / П.Н. Брусов, Т.В. Филатова, Н.П. Орехова. — М. : КНОРУС, 2020. 7. Финансовый менеджмент: теория и практика, Стоянова Е.С. (ред.), 6-е изд. - М.: Изд-во "Перспектива", 2010. <b>Լրացուցիչ գրականության ցանկ</b> 1. Финансовый анализ предприятия с помощью коэффициентов и моделей: учебное пособие, В.Ю. Жданов, И.Ю. Жданов — М. : Проспект, 2018. 2. Финансовый анализ: Учебно-методическое пособие. — М.: Экономический факультет МГУ имени М. В. Ломоносова, 2020. 3. Оценка компаний: анализ и прогнозирование с использованием отчетности по МСФО / Ник Антилл, Кеннет Ли; Пер. с англ. — М.: Альпина Паблишер, 2013. 4. Практикум по курсу «Финансы организаций» (корпоративные финансы). Учебное пособие. – СПб.: Изд-во СПбГУЭФ, 2011.

<b>1.0201/B34</b>	<b>2.Միկրոտնտեսագիտություն</b>	<b>3.6 ECTS կրեդիտ</b>
<b>4.4 Ժամ/շաբ.</b>	<b>5.30/0/30</b>	
<b>6.5-րդ կիսամյակ</b>	<b>7.Եզրափակիչ գնահատումով</b>	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> ուսանողներին ներկայացնել հիմնական միկրոտնտեսական օրենքները և դրանց միջև գոյություն ունեցող օրինաչափությունները, տնտեսվարող սուբյեկտների վարքագծի ուսումնասիրման համար կիրառվող տնտեսա-մաթեմատիկական մոդելները և մեթոդները, ինչպես նաև այս կամ այն միկրոտնտեսական հիմնախնդրի վերաբերյալ ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելու համար անհրաժեշտ հմտությունները և գործիքակազմը:</p> <p><b>Դասընթացի խնդիրներն են.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսանողներին ներկայացնել հիմնական միկրոտնտեսագիտական օրենքները և դրանց միջև գոյություն ունեցող օրինաչափությունները,</li> <li>• ուսանողներին ծանոթացնել արտադրողի և սպառողի տեսությունների, շուկայական հավասարակշռության մոդելների, շուկայի բացերի (հանրային բարիքներ, տեղեկատվական ասիմետրիաներ, արտաքին ազդակներ և մենաշնորհային շուկաներ) և դրանց կարգավորման եղանակների հետ,</li> <li>• ուսանողներին զինել միկրոտնտեսագիտական ցուցանիշները հասկանալու, վերլուծելու և մեկնաբանելու կարողություններով,</li> <li>• ուսանողներին սովորեցնել օգտվել մասնագիտական գրականությունից, վիճակագրական տվյալների աղբյուրներից և հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ այլ գործիքներից:</li> </ul>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. սահմանելու հիմնական միկրոտնտեսական հասկացությունները, օրենքները և դրանց միջև դրսևորվող օրինաչափությունները,</li> <li>2. ներկայացնելու սպառողի և արտադրողի տեսությունները, նրանց վարքագծի օպտիմալացման պայմանները և դրանց վրա ազդող գործոնները,</li> <li>3. մեկնաբանելու շուկայական հավասարակշռության մոդելները, շուկայի բացերը (հանրային բարիքներ, արտաքին արդյունքներ, տեղեկատվական ասիմետրիաներ ու մոնոպոլիաներ) և դրանց կարգավորման եղանակները:</li> </ol>		

<p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <p>1. վերլուծելու տիպային տնտեսա-մաթեմատիկական իրավիճակները և իրականացնելու ինքնուրույն հետազոտություններ:</p> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <p>1. աշխատելու թիմում,</p> <p>2. կառուցելու բանավոր և գրավոր փաստարկված խոսք:</p>		
<p><b>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</b></p> <p><b>Ա8.</b>Մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, քննարկելու գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները:</p> <p><b>Բ5.</b> Քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները:</p> <p><b>Բ6.</b>Տարբեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար ղեկավարի օգնությամբ իրականացնելու հետազոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր:</p> <p><b>Բ10.</b> Կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարբեր համակարգչային ծրագրեր:</p> <p><b>Գ3.</b> Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p><b>Գ8.</b>Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:</p> <p><b>Գ9.</b>Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>		
<p><b>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություններ,</li> <li>• թեստային վարժություններ և խնդիրների լուծում,</li> <li>• բանավեճեր, դերային խաղեր և իրավիճակային սցենարների քննարկումներ,</li> <li>• հետազոտական բնույթի թիմային աշխատանքներ,</li> <li>• տնային առաջադրանքներ:</li> </ul>		
<p><b>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</b></p> <p><b>1-ին ընթացիկ քննություն - 4 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25:.</b></p> <p><b>2-րդ ընթացիկ քննություն - 4 միավոր առավելագույն արժեքով արժեքով, միավորների քայլը՝ 0.25:</b></p> <p><b>Ինքնուրույն աշխատանք</b> –առավելագույնը <b>4 միավոր:</b></p> <p><b>Եզրափակիչ քննություն</b> քանավոր՝ տեսական հարցեր և գործնական խնդիրներ, <b>8 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.25:</b></p>		
<p><b>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Սպառման տեսության հիմունքները: <b>Թեմա 2.</b> Օպտիմալ ընտրություն: <b>Թեմա 3</b> Պահանջարկի և բարեկեցության վերլուծություն: <b>Թեմա 4.</b> Օպտիմալ ընտրությունը էնդոգեն եկամտի և անորոշության պայմաններում: <b>Թեմա 5.</b> Արտադրողի տեսության հիմունքներ: <b>Թեմա 6.</b> Արտադրության ծավալի և գնի որոշումը տարբեր շուկայական կառուցվածքների դեպքում: <b>Թեմա 7.</b>Ընդհանուր հավասարակշռության տեսություն: <b>Թեմա 8.</b> Շուկայի բացերը և դրանց կարգավորումը:</p>		
<p><b>14.Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Hal R. Varian, “Intermediate Microeconomics: A Modern Approach”, W. W. Norton &amp; Company, Inc., New York, 2010.</li> <li>2. R. Serrano and A. Feldman, “A Short Course in Intermediate Microeconomics with Calculus”, Cambridge University Press, Cambridge 2013.</li> <li>3. W. Nicholson and C. Snyder, “Microeconomic Theory: Basic Principles and Extensions”, Thomson/South-Western, Mason, 2008.</li> <li>4. Perloff J., “Microeconomics: Theory and Applications with Calculus”, 4th Edition, Pearson Education Limited, Harlow, 2018.</li> <li>5. Mas-Colell A. and Whinston M., “Microeconomic Theory”, Oxford Univeristy Press, Oxford, 1995.</li> <li>6. Silberberg E. and Wing S., “The Structure of Economics”, McGraw Hill, New York, 2001.</li> <li>7. Simon C. and Blume L., “Mathematics for Economists”, W. W. Norton &amp; Company, New York, 2010.</li> </ol>		

1.0201/B35	2.Հաշվապահական հաշվառում	3.6 ECTS կրեդիտ
4.4 ժամ/շաբ.	5.30/30/0	
6.5-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատումով	
<p><b>8.Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ կազմակերպության մրցունակության ապահովման գործընթացում հաշվապահական հաշվառման կարևորության, մեթոդի տարրերի և իրականացման սկզբունքների մասին: Պարզաբանել կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի հաշվառման</b></p>		

առանձնահատկությունները, իրականացման ձևերը: Բնչպես նաև ուսանողների մոտ ձևավորել, զարգացնել արդյունավետ հաղորդակցության, հիմնախնդիրները տրամաբանորեն լուծելու, դատելու, առաջարկություններ անելու ունակություններ:

**Դասընթացի խնդիրներն են.**

- մեկնաբանել հաշվապահական հաշվառման հիմունքները, ֆինանսական հաշվառման հիմնական տարրերը, հաշվային պլանը
- բացատրել ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառումների գործառնությունները, խնդիրները և առանձնահատկությունները,
- մեկնաբանել կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի հաշվառման մեխանիզմները,
- բացատրել եկամուտների և ծախսերի դասակարգումը և հաշվառումը,
- ուսուցանել օգտվել հաշվային պլանից, հաշվապահական փաստաթղթերից և հասկացություններից տնտեսական որոշումներ կայացնելիս,
- ուսանողներին զինել հաշվապահական փաստաթղթեր լրացնելու և ստուգելու, հաշվապահական խնդիրներ լուծելու, գործառնությունների համար հաշվապահական ձևակերպումներ գրելու կարողություններով:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

1. սահմանելու և բացատրելու հաշվապահական հաշվառման առարկան, մեթոդը, ֆինանսական հաշվառման հիմնական տարրերը:
2. բացատրելու ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառումների առանձնահատկությունները, ֆինանսական հաշվառման գործառնությունները, խնդիրները:
3. սահմանելու, մեկնաբանելու, հաշվառելու կազմակերպության ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը:
4. մեկնաբանելու դասընթացի սահմաններում նախատեսված մասնագիտական տերմինները:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

1. աշխատելու հաշվային պլանով, գործառնությունների համար գրել հաշվապահական ձևակերպումներ, լուծելու հաշվապահական խնդիրներ,, լրացնելու և ստուգելու հաշվապահական փաստաթղթեր:
2. օգտվելու հաշվապահական փաստաթղթերից և հասկացություններից տնտեսական որոշումներ կայացնելու:
3. տարբերակելու, վերլուծելու և մեկնաբանելու տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ**

1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից:
2. աշխատելու թիմում, շփվելու մասնագիտական լեզվով:
3. անհայտ իրավիճակներում կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու, կատարելու առաջարկություններ::

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.**

**Ա5.** Ներկայացնելու ֆինանսական հաշվառման էությունը և հաշվետվությունների պատրաստման և ստուգման ձևերը:

**Ա9.** Մեկնաբանելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները:

**Բ6.** Տարբեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար ղեկավարի օգնությամբ իրականացնելու հետազոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր:

**Բ7.** Կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարբեր համակարգչային ծրագրեր:

**Բ8.** Կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները:

**Գ2.** Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությունում,

**Գ3.** Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,

